Թ. ՏԱՐԻ 2650 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 15 ՏՈՒ 4385 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1892 16 ՃԷՄԱԶԻԼ ԷՎՎԷԼ 1310 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան կանխիկ վճար	150
» »	Վեցամսեայ » »	75
» »	Եռամսեայ » »	40
Օտար երկիրներ	Տարեկան Ֆրանք	56
» »	Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ [illegible]	Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ	Ղրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՆՈՅՄ. 23/5 ԴԵԿՏ. 1892

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Հանգուցեալ եկեղեցական մը ժամանակաւ շահագործութեան համար վաճառականի մը երկու հազար ոսկւոյ չափ գումար մը յանձնած և այն վաճառական վնասներ կրելով նոյն գումարէն այս օրուան օրս իբր եօթն հարիւր ոսկւոյ գումար մը միայն մնացած ըլլալուն առթիւ, ոմանք խնդիր կ'ընեն թէ եպիսկոպոսք ընդհանրապէս, և եկեղեցականք մասնաւորապէս, պէ՞տք է ստակ ունենան։

Ոմանք կ'ըսեն թէ քանի որ եկեղեցականաց մեծ օրինակն, Յիսուս Քրիստոս, անարծաթ ապրեցաւ, եկեղեցականներն ալ, կուսակրօնները մանաւանդ, դրամի պէտք չունին։ Ժողովուրդն օրն օրին կրնայ զիրենք ապրեցնել։

Ուրիշներ ալ կը պնդեն թէ քանի որ եկեղեցականք մարդ են, մարդկութեան ամեն պէտքերն ու ամեն կարօտութիւններն ունին, և անոնց մէջ հազուադէպ են ծնողք և այլ ընտանեկան պարագայ չունեցողներ, զարմանալի չէ որ անոնք ևս դրամ պահելու հոգածու ըլլան։

Այս տեսութեանց ո՞րն է ճշմարիտ։

⁂

Ըստ մեզ, ճշմարտութիւնը ծայրայեղութիւններէն չախորժիր. ընդհանրապէս միջին եզր մ'է ճշմարտութիւնը։

Իրաւունք ունին անոնք որք կ'ըսեն թէ եկեղեցականք աշխարհականներու չափ պէտք չունին դրամ պահելու, և քանի որ նոյնքան կարօտ չեն, նոյնքան ալ հոգածու պէտք չէ ըլլան դրամ շահելու։

Իրաւունք ունին անոնք ևս որք կ'ըսեն թէ եկեղեցականք ալ մարդ են, կ'ապրին մարդկային ընկերութեան մը մէջ, և չեն կրնար առանց դրամի ըլլալ բոլորովին։

Այս մասին հարկ չկայ մինչև Յիսուս Քրիստոս ելնելու. զի մեր եկեղեցականք որչափ ալ Յիսուս Քրիստոսի օրինակին հետեւող ըլլան պաշտօնապէս, միեւնոյն կեանքով ապրելու անկարող են. զի Յիսուս Քրիստոս Աստուած էր, և Թերահաւատք իսկ որք բոլորովին չեն հաւատար Յիսուսի Աստուածութեան, կը խոստովանին Ռընանի հետ թէ աստուածային էակ մ'էր Յիսուս. Le divin Jésus. մինչ մեր եկեղեցականք ո՛չ մին են ո՛չ միւսն, եւ չափազանց միամտութիւն կ'ըլլար սպասել որ մին կամ միւսն ըլլան օրին մէկը։

⁂

Բարձրաստիճան եկեղեցականաց կարգին մէջ, կը ճանչենք մէկն որ բազմահայ թեմի մը երկարժամանակեայ առաջնորդն եղած լինելով, իր ծերութեան մէջ առաձեռն ունեցաւ հի՛նգ թէ վեց հազար ոսկւոյ գումար մը, զոր խնայողութեամբ շահագործել տուած էր, և բովանդակ այն գումարով ազգօգուտ հաստատութեան մը համար կալուածներ շինել տուաւ իր տնօրէնութեան ներքեւ։ Ամենեւին ընտանեկան պարագայ չունենալով, կրցաւ իր դրամն ամբողջովին ազգօգուտ նպատակի յատկացնել։

Միւս կողմէ, կը ճանչենք ուրիշ մը, աւելի մեծ համակրանաց արժանացած, որ նոյն բարձրագոյն պաշտօնները վարած և նոյն քանակութեամբ դրամ խնայած էր առանց երբեք գայթակղութիւն պատճառելու, բայց Ազգն հինգ փարայի օգուտ չունեցաւ նոյն դրամէն։ Ընտանեկան պարագայներուն միայն պէտքերուն յատկացաւ, ինչպէս ո՛և իցէ աշխարհականի մը հարստութիւնը։

Կը ճանչենք ոմն որ կարեւոր թեմի մը մէջ քանի մը տարի պաշտօնավարած է իբրև առաջնորդ որոշեալ ամսականով։ Իր պաշտօնը վայելչապէս վարած է, բայց այսօր հարուստ չէ։ Ասով ամենայնիւ, այս եկեղեցական իր պաշտօնավարութեան միջոցին ազգային սեփականութեանց կարեւոր գործ մը կարգադրեց յօգուտ Ազգին, և երբ շնորհապարտ կողմն իբրև արդար վարձ իր աշխատութեան՝ քանի մը հարիւր ոսկւոյ գումար մը նուէր բերաւ, առաջնորդը մերժեց ըսելով. «Ես իմ ամսականս ունիմ, այդ է իմ արդար վաստակս. ինչ որ ըրեմ պաշտօնիս բերմամբ՝ պարտաւորութիւնս է. եթէ այդ գործը կարգադրեցի՝ Ազգին օգտին համար էր, իմ պաշտօնիս շրջանակին մէջ։ Այս գումարն ալ ուրեմն կը յղեմ նոյն նպատակին։ Այս դրամով կալուած մը գնեցէք և ազգային սնտուկին յատկացուցէք եկամուտն։» Որչափ ալ կը ստիպեն զինք որ անձնապէս իրեն նուիրեալ այս գումարն ընդունի, առաջնորդը բացարձակ կը մերժէ, եւ այն պարգեւն իր ցուցած եղանակաւ յօգուտ Ազգին կը գործածուի ի վերջոյ։

Կը ճանչենք նաև ուրիշ մը որ իր երկարատև պաշտօնավարութեան շրջանին մէջ շատ դրամ շահած է, բայց ոչինչ պահած է, ոչինչ յօգուտ բարեգործական և կրթական նպատակներու գործածած է, և այսօր շատ կարօտ պիտի մնար եթէ ամսաթոշակ մը իր ապրուստն ապահոված չըլլար։

Ասոնցմէ զատ հա՛տ մ'ալ կայ որ ո՛չ միայն իբրև առաջնորդ, իբրև վանահայր, իբրև այցելու քննիչ այլ և իբրև հեղինակ որոյ ամեն գրեանք ծախուած սպառած են կ'ըսուի՝ առիթներ ունեցած է խնայութիւններ ընելու, մանաւանդ զի իր անձնականին մեծ բան չէր ծախսեր։ Բայց այս եկեղեցական ալ իր դրամը գործածել չէ գիտցած։ Չափազանց վստահութիւն մը պատճառ եղած է այն դրամին մեծագոյն մասին կորստեան, թէև ինք մտադրած էր անոր մեծագոյն մասն հանրօգուտ նպատակի յատկացնել։

Կը ճանչենք, վերջապէս, ուրիշ մը որ թէև շատ առիթ ունեցած չէ դուռները պտտելու և գործունեայ կեանք մը վարելու, բայց իր գրչին բերմամբ դրամ անցած է ձեռքը։ Բայց անհաշիւ կենսակցութիւն մը կամ անխոհեմ ընթացք մը ամեն բանէ զրկած է զինք, և ի վերջոյ յետին խեղճութեան մէջ ինկած է, չունենալով այլ ևս ո՛չ ամսական ո՛չ տարեկան հասոյթ, ևն։

Բայց այս վեց տեսակ եկեղեցականք իրենց կարգին մէջ հազուադէպ են իրենց առաքինութեամբ, կամ իրենց բախտաւորութեամբ, և կամ իրենց անխոհեմութեամբ։ Ուրիշ եկեղեցականներու, նոյն իսկ կուսակրօններու մեծագոյն մասն օրն օրին ապրող մարդիկ են, և «դրամատէր» անուանուելու արժանիքը չունին։ Յոյն եպիսկոպոսաց հարստութեան ո՛չ իսկ հեռաւոր նմանութիւն մը կրնայ ունենալ մերայնոց «հարստութիւնն»։

⁂

Այս դրական օրինակաց վրայէն դատելով, դժուար չէ որոշել թէ ի՛նչ սկզբունքի պէտք է հետեւինք «եկեղեցականաց հարստութեան» խնդրոյն մէջ։

Աշխարհական մը պարսաւելի չըլլար եթէ առաւօտէն մինչև երեկոյ դրամ շահելու ետևէ ըլլայ մինակ, առանց դրական կամ բարոյական օրինաց դէմ մեղանչելու։ Աշխարհ հիմակ ա՛յնքան արծաթապաշտ է, Դրամն ա՛յնքան գերակշիռ կարեւորութիւն ստացած է դժբախտաբար, որ այս մասին շատ մը բաներ կը ներուին աշխարհականներուն։ Բայց յայտնի է թէ նոյն բաներ չեն ներուիր եկեղեցականներուն։ Ասոնց համար Դրամը չի կրնար նպատակ մ'ըլլալ։ Միջոց մը միայն պէտք է ըլլայ։ Իրենց նպատակն, իրենց պաշտօնն, Ազգին և Եկեղեցւոյն և իր հանրօգուտ հաստատութեանց օգտակար ըլլալ, հոգիներ ու միտքեր կրթել, իրենց հօտին բարոյական, իմացական և ընկերական բարելաւման և ազնուացման աշխատիլն է։ Եթէ այս վսեմ նպատակն աչքէ վրիպեցնելով Դրամն իրենց նպատակ ընեն, կամ՝ որ յոռեգոյնն ևս է՝ եթէ Դրամի սիրոյն համար իրենց պաշտօնին նուիրական պարտաւորութեանց դէմ մեղանչեն, յայտնապէս դատապարտելի կ'ըլլան։ Այս մասին ո՛չ ոք տարակարծիք կրնայ ըլլալ։ Եթէ քահանայք, իբրև ընտանեաց հայրեր, քիչ մը աւելի հետամտութեամբ կը կարօտին իրենց ընտանեաց և զաւակաց ապագայն չափաւորապէս ապահովելու համար, նոյն պարտաւորութենէն զերծ են կուսակրօնք, որք թէպէտ չեն կրնար ծեր և կարօտ մայրեր կամ անչափահաս քոյրեր երեսի վրայ թողուլ, բայց վերջապէս եթէ ընտանեկան շատ բեռներ ունին, ո՛չ ոք զիրենք կը պարտաւորէ անձնուիրութեան ասպարէզ մ'ընտրելու. զի կուսակրօնն երբ իր իսկ անձէն կը սկսի աշխարհէ հրաժարելու պարտաւորութիւնն, աւելի նախանձախնդիր չի կրնար ըլլալ ընտանեկան պարագայներու։

⁂

Բայց եկեղեցական մը որուն հմտութիւն և գործունէութիւն կը պակսին, որ ո՛չ գաւառները կը պտտի, ո՛չ գրչով կ'աշխատի, և իբրև քարոզիչ կամ դասատու քանի մը հարիւր ղրուշի ամսականով կը շատանայ, առաւե՛լ յանձնարարելի է քան բանիբուն, գործունեայ, ուսեալ և հմուտ եկեղեցական մը, որ պարապ չի կենար, անպաշտօն մնացած պահուն կը հեղինակէ և իր գրուածք դրամ կը բերեն, և առաջին առթիւ կը նետուի ուր որ ժողովրդային ձայնը կոչէ զինքը պաշտօն, որ կը սիրուի, ժամուց շատ կ'ընդունի, և անխոհեմաբար չի շռայլեր, այլ կը խնայէ և կ'աւելցնէ։ Տարակոյս չկայ թէ այսպիսի եկեղեցական միւս եկեղեցականէն աւելի օգտակար է թէ Ազգին և թէ Եկեղեցւոյն, թէև 20—30 տարի ետքն հաւանական է որ քանի մը հարիւր կամ քանի մը հազար ոսկի ունենայ։ Վերջապէս, այս եկեղեցական կը խորհի թէ պարապ մնալ կայ, յանկարծ պաշտօնէ դադարիլ կայ, Կ. Պոլսոյ մէջ հանգիստ եկեղեցի մը չգտնել կայ, հիւանդութիւն, անկարութիւն, ծերութիւն կան, և թէպէտ Ազգին վանքերն և բարեգործական հաստատութիւններն այսպիսեաց համար են, ինք պարսաւելի չէ եթէ իր ճակտին քրտամբ իբրև արդար վաստակ ընդունած դրամէն բան մը պահէ զգուշութեան համար։ Այս կերպ խնայութեան մը ո՛չ մէկ բանաւոր անձ առարկութիւն կրնայ ընել, թէև ամենքս ալ կը համակրինք ա՛յն եպիսկոպոսին որ բացէն իրեն նուիրուած գումար մը Ազգին կը նուիրէ՝ «Ազգս միշտ կարող է հոգալ զիս» ըսելով։

Եւ երբ մեր գնահատութեան ներկայացուին երկու եպիսկոպոսներ, որոց մին իր խնայած դրամովն ալ Ազգին կը ծառայէ, իսկ միւսն այն դրամն իր անձնական հանգստութեան և իր ընտանեաց անդամներուն վայելման միայն կը գործածէ, հարկ է ըսել թէ որի՛ն ընթացքն աւելի համաձայն կը գտնենք եկեղեցական պարտաւորութեանց։

Եթէ մեր եկեղեցականք գիտեն թէ Եւրոպիոյ մէջ հարուստ եպիսկոպոսներ և Լորտի պէս ապրող թեմակալներ կան, գիտե՞ն արդեօք նաև թէ եւրոպացի եպիսկոպոսք ոմանք ի՛նչ մեծ և կարեւոր հաստատութիւններ հիմնած են, և իրենց կտակաւ ո՛րպիսի հանրօգուտ նպատակներու կը գործածուի իրենց դրամին մեծագոյն մասն։ Եպիսկոպոսներ կան որք համալսարանական դասախօսութիւններ հիմնած են, կամ որք որբանոց բացած են, եկեղեցի շինած, նորոգած կամ օժտած են, և թէպէտ իրենց դրամական իրաւունքները ճշդիւ կը պահանջեն, բայց աշխարհականներէն աւելի կը զգան բարերարելու պարտաւորութիւնը։ Թէ՛ բողոքական, թէ՛ կաթոլիկ եպիսկոպոսներ ալ կան այսօր որք բարա մը չունին. զի ի կենդանութեան աղքատներու, կարօտեալներու, դպրոցներու, հիւանդանոցներու, կամ վանքերու կը բաժնեն ամեն բան։ (*)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՔ. — Թայմզ իր Վիեննայի թղթակցէն հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ Նոյմ. 24 թուով.

«Պուքրէշէ բարեկամ մը կը գրէ ինծ թէ Պեսարապիոյ ռուսական նահանգին ռուսացման գործը մեծ դժուարութեան կը բախի, և հակառակ տասն և հինգ տարիէ ի վեր եղած ճիգերուն, ռուս լեզուն շատ դանդաղապէս կը յառաջանայ նահանգին մէջ։ Դպրոցները բազմացուցած է կառավարութիւնը, բայց արդիւնք համապատասխան չեն պաշտօնական ակնկալութեանց։ Այժմ աւելի քան 400 ռուս վարժարանք կան Պեսարապիոյ մէջ, ուր կը յաճախեն իբր 32,000 աշակերտք և աշակերտուհիք։ Բնականապէս ասոնք ռուսերէն կը սորվին դպրոցի մէջ, բայց դպրոցէ մեկնելնուն պէս, մոլտաւերէն (ռումաներէն) միայն կը խօսին, և կը մոռնան ռուսերէնը։ Մոլտաւեանք մեծապէս յարեալ են իրենց լեզուին, և արդէն ռուսերէնէ օգուտ մը չեն սպասեր։ Այս պայմանաց մէջ, հաւանական է որ Պեսարապիոյ մէջ ի մօտոյ ի գործ դրուին նոյն ազդու տնօրինութիւնք որք Տէրութեան ուրիշ կողմերն ի կիր կ'առնուին ռուս լեզուի գործածումը պարտաւորիչ ընելու և ընդհանրացնելու համար։»

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՆ

Ֆրանսական Ակադեմիան անցեալ հինգշաբթի իր տարեկան նիստն ըրաւ առաքինութեան եւ գրականութեան մրցանակները բաշխելու համար։ Կը յիշուի թէ դար մը յառաջ ապրող Մոնթիոն անուն ֆրանսացի հարուստ մը, որ շատ առաքինի կեանք մը չէր վարած, տասն միլիոն ֆրանք կտակած է Ակադեմիոյ, անոր հասոյթով մրցանակներ տալու համար տարւոյն ընթացքին մէջ առաքինութեան ամենէն աւելի գնահատելի գործերը կատարող պարզ մարդոց։ Եւ հարիւր տարիէ ի վեր Մոնթիոն ամեն տարի կը փառաւորուի Ակադեմիոյ մէջ, մէկ մէկ ակադեմականի բանախօսութեամբ, որ գրական մէկ մէկ դէպք է ինքնին։

Այս տարի սովորականէն աւելի ուշագրաւ եղաւ մրցանակաբաշխութիւնն, որովհետեւ տարեկան ճառն արտասանեց Պ. Էմիլ Օլիվիէ, Նափոլէոն Գ. Կայսեր նախարարապետն, որոյ իշխանութեան միջոցին հրատարակեցաւ 1870ի պատերազմը։ Պատերազմէն քիչ առաջ, Պ. Էմիլ Օլիվիէ, որ 1869ին ընտրուած էր, ներկայացաւ իր ընդունելութեան ճառն արտասանելու։ Բայց այս ճառ չընդունուեցաւ Ակադեմիայէն և չկարդացուեցաւ, զի Նափոլէոն Գ. Կայսեր ներբողը կը պարունակէր, և հասարակաց կարծիքն 1870ի աղէտալի պատերազմին պատճառ եղած այն Կայսեր այնքան հակառակ էր որ չուզուեցաւ քաղաքական խնդիրներ յուզել գրական Ակումբի մը մէջ։ Այն մերժումէն ի վեր, տարիներով Պ. Օլիվիէ բերանը բացած չէր և Ակադեմիա չէր ներկայացած։ Կը յուսացուէր որ այս ճառին մէջ սուր ակնարկութիւն մ'ընէր իր երկարամեայ լռութեան և իրեն դէմ ըսուած բաներուն, իբրև պատճառ 1871-71ի աղէտից։ Ուրիշներ ալ կը կարծէին թէ Ակադեմիա երթալու համար անցնելիք փողոցներուն մէջ իր երեւումը գոհունակութիւն յառաջ չպիտի բերէր։ Այս անտեղի թէութիւնք ի դերեւ ելան, և Քառասուն Անմահից հանդարտ մթնոլորտը վրդովող միակ բանը բարձր դասակարգերու պատկանող գեղեցիկ տիկնանց ձմեռնային թարմ արդուզարդերուն ակնահաճոյ տեսքն և ականջներ փայփայող շրշիւնն էր։ Պ. Օլիվիէի բանախօսութիւնը կարճ էր, և ամենայն լրջութեամբ կը խօսէր միայն առաքինութեան մրցանակներուն վրայ։ Այս տարի 2,000 ֆր.նոց գլխաւոր մրցանակներէն մին վիճակած է Լէոն Շարլ Ժանին անուն անձին, ծեր զինուոր մը, որ 29 տարիէ ի վեր առանց թոշակի անձնուիրապէս կը ծառայէ իր նախկին սպային, որ կործանեալ մարդուն մէկն է և անոր ընտանիքին. նոյն մրցանակը կը ստանայ Բօլէն Անֆէս, որ իրեն բան գործ ըրած է Փարիզի անկեալ և մոլի մարդիկն ի կարգ բերել, բարոյացուցիչ զբօսանքներով։ 2,000 ֆր.ի մրցանակ մը շահած է նաև Մառի Բայլա, որ 28 որբուհիներ կը մեծցնէ և կը կրթէ շարունակ, իբրև ֆրանսացի Սրբուհի Մայրապետ մը, որոյ յիշատակն անցեալ օր կը տօնուէր Խասգիւղի մէջ։ Այս բարեգործներուն վրայ խօսելով Պ. Օլիվիէ որոտաշարժ շեշտեր ունեցաւ, որք հանդիսականներն հմայեցին։ «Աղքատութիւնն երկրիս բանաստեղծութիւնն է։ Անով սերունդէ ի սերունդ [illegible] կը մթերուի առողջ հիւթն յորմէ կը ծնի հանճարն. աղքատութիւնը կը վարժեցնէ հոգին անձնուիրութեան, և այսու կը զօրացնէ և կը մաքրէ զայն, և բաւական զօրեղ կը հանդիսացնէ զնա՝ բարձրագոյն գագաթներուն սաւառնելու հասնելու համար։» Ուրիշ մանր մունր պարգեւներ ալ կային՝ առաքինութեան ուրիշ գործերու համար. յետոյ բաշխուեցան գրական մրցանակները՝ 4,000էն մինչև 1000 ֆր.ի։

ԱՆԳԼԻԱ ՅԱՓՐԻԿԷ. — Անգլ. կառավարութիւնն որոշեց թող տալ որ Անգլ. Ափրիկեան Ընկերութիւնը մինչև 31 մարտ 1893 իր մարդիկը քաշէ հանէ Ուկանտայէն, բայց ասով Անգլիա չպիտի թողու այդ երկիր, այլ Անգլիոյ կառավարութեան կողմէ լիազօր պատուիրակ մը պէտք եղածին չափ զօրքով հոն պիտի երթայ, և երկրին հանգամանքները քննելով, տեղեկագիր մը պիտի մատու-

---

(*) Բողոքական եպիսկոպոսներուն այս մտօք ըրածներն աւելի գնահատելի են. զի յայտնի է թէ անոնք ամուսնացեալ են, և բազում զաւակներու տէր են յաճախ։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (17)

Է. ԹԻՒՏՊՈՒԹ ԵՒ Է. ԼԻՑԷՆ

ՓԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԵՂԱՆԻԿ ՃՆՇՈՒՄԸ

—Ամենայն բաներու համա՞ր իսկ։

—Մանաւանդ անոնց համար։ Վկայ՝ դրախտը։

—Դրախտին մէջ «բա՞յց» մը կար։

—Այո՛, խնձորը։

—Ես իմ դրախտիս մէջ բնաւ խնձոր չեմ տեսներ։

—Թերևս կայ։

—Այն ատեն իրաւունքով ինծ կը պատկանի։

—Անշուշտ, միայն թէ Կասթոն...

—Շնո՜րհ, Կասթոնի վրայ չխօսինք։

Մինչ Մարսէլ և Էնրիէթա այս կռուըտուքին զբաղած էին, Ռօօթան կոմսն և տ'Օրքա ցած ձայնով կը խօսակցէին վարագոյրի մը ետին։

—Սիրելի կոմս, կ'ըսէր տ'Օրքա, Էնրիէթա բացառիկ կին մըն է, և կատակը մէկդի, երջանիկ մահկանացու մըն էք դուք։ Այստեղ ամեն մարդ կը նախանձի ձեր վրայ։

—Համամիտ եմ ձեզ այս ըսածին. այս կին հրաշալիք մըն է. բայց միւսը...

—Ո՞ր միւսը, ըսաւ տ'Օրքա չհասկնալ ձեւացնելով։

—Տէ՛ր Աստուած։ Լուիզ Մօպէ՛րը։

—Տակաւին կը մտածէ՞ք անոր վրայ։

—Ամեն ժամանակէ աւելի։ Մնաց որ, գրաւ մը կայ։

—Ո՛հ, բանի տեղ մի դներ այդ...

—Կը վախնա՞ք։

—Ամենեւին. բայց ուրիշ բանի վրայ խօսինք։

—Այո, վասն զի ահա Էնրիէթան։

—Մարսէլը մեզ կը բերէ։

—Ի՞նչ կ'ըսէիք տեսնենք, պարոններ, հարցուց մանկամարդ կինը։

—Առաքինութեան վրայ կը խօսէինք, պատասխանեց տ'Օրքա։

—Կանանց առաքինութեան վրայ, յարեց Կասթօն սնամտօրէն։

—Եւ ի՞նչ է պարոն կոմսին կարծիքը։

—Սիրելիս, իմ կարծիքս... սա է որ առաքինութիւնը դրամ մըն է որ ալ շրջաբերութիւն չունի։

—Իսկ դո՞ւք, պարոն տ'Օրքա։

—Ես անմիտ եմ, կը հաւատամ։

—Շնորհակալութիւն պարկեշտ կանանց համար, ըսաւ Էնրիէթա լրջօրէն։

Եւ, Մարսէլին դառնալով.

—Իսկ դուք, պարոն տը Պոռնէր, դո՞ւք ինչ կը մտածէք կանանց առաքինութեան վրայ, հարցուց մանկամարդ կինը։

—Ես կ'ըսեմ թէ այս նիւթը իմաստասիրութեան նիւթ մը չէ, միայն թէ Եպիկուր մը չըլլայ զայն գրաւողը։

—Ո՛հ, պատւո՛. ի՛նչ աղւոր մտածում և ի՛նչ աղւոր ըսուածք, հաստատեց նոր ձայն մը անգլիական [illegible] հնչմամբ։

Մարսէլ ետին դարձաւ սարսռալով։

Նա որ այնքան յեղակարծօրէն կուգար խառնուիլ խօսակցութեան, անծանօթ էր իրեն։ Երբեք ընկերութեան մէջ հանդիպած չէր անոր, եւ սակայն թուեցաւ իրեն թէ անիկա անծանօթ չէր։ Ձայնին թրթռումն անախորժ յուշում մը տուած էր իրեն։

Ձայն քննելով, տարտամ նմանութիւն մը գտաւ անոր և պարոն Պարթոլոմէօի միջև։ Բայց անգլիացին շիկագոյն կողմնամօրուսներ կը կրէր, խարտիշագոյն մազեր եւ թաւ պեխ մը. և իբր որոշիչ նշան իր ազգայնութեան, Ալպիոնի զաւակներուն բնագրօշմ անճկունութիւնն ունէր, ինչ որ հակապատկերն էր Զրթելյար տան Իտալացիին ցուցուցած դիւրաշարժութեան և յանդգնութեան։

—Ա՛հ, դուք էք, սըր Ճօն Հարրի, ըսաւ Էնրիէթա։ Պարոններ, շարունակեց, ձեզ կը ներկայացունեմ սըր Ճօն Հարրին, ազնուազգի Անգլիացի մը... իր ձիերուն պէս ազնուական մը, որ քիչ կը խօսի և երկար ատեն կը խմէ... որ երբեք չի հաւնիր... տաք սիրտ, ազատ ոգի ունի։

Երիտասարդները բարեւեցին զայն բաց ի Մարսէլէն։

Այս պահուն, եկան ծանուցին մանկամարդ կնոջ թէ սեղանը պատրաստ է։

—Սեղան երթա՛նք, ըսաւ Էնրիէթա զուարթ շեշտով։ Ձեր բազուկը, դերակոմս։ Սըր Ճօն Հարրի, այսօր ձեր տեղն իմ աջակողմս է։ Իսկ դուք, Կասթօն, յարեց ծիծաղելով, ձեր տունին պէս վարուեցէք։

—Անպատճառ, կ'ըսէր միտքէն Մարսէլ Անգլիացիին երեսը նայելով, միտքս խառված է... միւսն աւելի նրբահասակ, աւելի փոքր է։

Սակայն և այնպէս շարունակեց դիտել զայն մեծ ուշադրութեամբ։

Սեղան նստելէ առաջ, տ'Օրքային մօտեցաւ և ըսաւ անոր ականջին.

—Աղէկ քննեցէք սա Անգլիացին։

—Ինչո՞ւ։

—Չէ՞ք կարծեր որ քիչ մը Իտալացիի նմանի։

—Իտալացիի՞ մը, իրաւ որ ոչ. բայց կրնայ յոյն մը ըլլալ։

—Աւելի պատճառ մը վրան հսկելու։

—Հասկցայ։ Ճիշդ [illegible] մը պիտի տամ իր գործերուն ու շարժումներուն վրայ։

Թ

ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԸ

Էնրիէթայի մտերիմներն արշալոյսին միայն կը մեկնէին։

Մարսէլ էն ետքը գացողներէն եղաւ։

Իսկ Սըր Հարրի սեղանէն անմիջապէս ետքն հրաժեշտ առած էր։

Դերակոմսը տուն դարձած էր համակ մտահոգ։ Քանի մտածեր Պառոն Պարթոլամէօի վրայ, ա՛յնքան նման կը գտնէր զայն անգլիացիին։

Միեւնոյն ձայնն էր, հակառակ շեշտին տարբերութեան։

Իր կողմէ, տ'Օրքա, Կասթոնի փէշ խօսքերուն անհնարին տպաւորութեան ներքեւ մնացած, առած քալած էր ցաւագին կերպով մտածելով այն վիճակին վրայ որ կը սպասէր Լուիզ Մօպէրի։

Խառնուելով Կասթոնի ակնկալութիւններուն, չափով մը մասնակցելով մոլորեցումի այս աղտոտ փորձին, տ'Օրքա հնազանդած էր հետաքրքրութեան զգացումի մը, պարապորդի քմայքի մը։

Զզուանքը զոր ի սկզբան ներշնչած էր իրեն այս խորհուրդ, ետքէն աւելի սաստկացած էր։ Սիրտը, ուղղութեամբ առլցեալ, կ'ըմբոստանար գծուծ դաւին դէմ որ կը սպառնար մանկամարդ աղջկան, և որուն մեղսակից կ'ըլլար գրաւի մտնելով։

Ասոր համար է որ փորձած էր Կասթոնը ետ կեցունել իր խորհուրդէն։ Բայց ի զուր կոչում ըրած էր կոմսին վեհանձն զգացումներուն, խառնագնաց երիտասարդին բաղձանքները սաստկացունելէն զատ բան մը չէր ըրած։

Մտածեց գործն իմացունել Լուիզին, բայց խօսք տուած էր տասն օր [illegible] կենալ, և պատւոյ մասին ծուռ հասկացողութեամբ մը, կանգ առաւ իր բարի ընթացքին մէջ։

Այս մեղապարտ խղճահարութիւններ դժբախտաբար շատ ընդհանրացած են։

—Սակայն, մտածեց, մանկամարդ աղջիկը պիտի ոգորի տասն օր, ապա թէ ոչ, ամեն կիներէն ալ կասկածելու է։

Տուն դարձաւ, Լուիզի պատկերէն հետապնդուած։

Էնրիէթա անկողին մտած էր. բայց թէեւ շատ քնամոլ եւ յոգնավաստակ, քունը չտարաւ։

Մարսէլի վրայ կը մտածէր։

Կը սիրէ՞ր զայն։

Յոխորտ ցոփուհին չէր ուզեր հարցափորձել իր սիրտը։ Ոչ, չէր հաւատար որ կը սիրէ այն ցուրտ ազնուականը. նոյն իսկ կրնար հաստատել թէ անիկա անտարբեր էր. բայց կը վախնար որ սէր չը զգայ։ Կը հասկնար թէ անգամ մը որ տարփանքն արթնցուէր իր սրտին մէջ, սարսափելի դժբախտութիւն մը պիտի ըլլար իրեն համար։

Փայլելու անյագ տենչին տակ բացարձակապէս ընկճուած էր, ունենալով, ինչպէս ըսինք, բոլոր թերութիւններն ու բոլոր մոլութիւններն որով կը կորսուին կիները, Էնրիէթա երբեք սիրած չէր։ Սէրէն խոյս տուած էր ինչպէս վտանգէ մը։ Կին մը չէր, կենդանի արձան մը։

Մեծամտութեան այն տագնապներէ միոյն մէջ որք այնքան ընտանի էին իրեն և որք իր համբաւը տարածած էին, երդում ըրած էր երբեք չսիրել։

—Եթէ պէտք ըլլայ սիրտս պիտի փրցնեմ, ըսաւ, այլ անզգայ պիտի մնամ։ Մարմարէ ըլլալ կուզեմ։

Մինչեւ այն ատեն խօսքը բռնած էր։

Երկու անգամ միայն, իր խօլ կեանքին մէջ, սիրտի տեսակ մը սարսուռ զգացած էր։

Ըսենք թէ ի՛նչ պարագայներու մէջ, և կատարելապէս նկարագրած պիտի ըլլանք այս կինը։

Այս երկու յուզումներէն առաջինը զգացած էր անձնուիրութեան մը հետեւանօք։

(Շարունակելի)

ցանէ կառավարութեան թէ ինչ կարելի է ընել Ուկանտայի մէջ։

ՀՆՏԱԽՏ ԵՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ.— Համպուրկի մէջ 7,533 ստորագրութեամբք հանրագիր մը մատուցուեցաւ տեղւոյն վարիչ Ծերակոյտին, անոր միջամտութիւնը խնդրելով յօգուտ փոքր խանութպաններու և գործաւորներու որք չարաչար նեղուած են հնտախտի համաճարակէն, և յետին ծայր թշուառութեան մատնուած կը գտնուին։

Ի ԼԵՀԱՍՏԱՆ.—Լեհաստանի աւստրեան մասէն կը հեռագրուի թէ շատ մը ռութէն գիւղացիներ Ռուսիա գաղթած ըլլալով, Նահանգին յունածէս կաթոլիկ եպիսկոպոսութեան դիտողութիւն եղած է կառավարութեան կողմէ որ այս գեղջուկ ժողովրդեան մէջ իւր հոգեւոր և բարոյական պարտաւորութեանց կատարման աւելի հոգ տանի և թող չտայ որ անոնք Ռուսիա գաղթեն՝ լաւագոյն վիճակի մը ակնկալութեամբ։ Թէեւ նահանգային յանձնաժողով մը պաշտօն ստանձնած էր այս գիւղացիներուն գաղթման առաջքն առնելու համար, բայց արդիւնք չէ ունեցած, և գաղթային շարժումը շարունակուած է։

ԿԻՆ ԱԿԱԴԵՄԱԿԱՆՔ.— Անցեալ օր ըսինք թէ Տիկին Ատան կը խորհի Ֆրանսայի Ակադեմիոյ ընտրելի հանդիսանալ։ Այս գաղափար ուրիշ երկիրներու մէջ արդէն ի կիր կ'առնուի։ Պաւիերայի Թերեզա իշխանուհին Միւնիխի Գիտութեանց Ակադեմիային անդամուհի ընտրուած է, իբրեւ առաջին կին անդամ։ Հռոմայ մէջ կոմսուհի Էրսիլիա Քաէթանի Լովաթէլլի, քոյր Սերմոնեթայի դքսին, տասն տարիէ հետէ անդամ է Հռոմայ Գրական Ակադեմիային, և իտալեան դպրութեանց մէջ հանրածանօթ է իւր հրատարակութեամբք գրական-հնախօսական նիւթերու վրայ, և կանոնաւոր աշխատակից մ'է իտալեան գլխաւոր հանդէսին, Նուովա Անդալոճիա։ Նշանաւոր բանաստեղծուհի մ'է և մեծ եռանդեամբ պարապած է Հռոմայ վերաբերեալ ուսումնասիրութեանց։

Պ. ՏԸ ԼԸՍԷՊՍ ո՛չ միայն չի գիտեր իւր անուան շուրջ յուզուած աղմուկն, այլ և չի գիտեր թէ իւր որդւոյ մին Մազաս կը գտնուի։ Կը կարծէ թէ իւր Պոստոյի կորագնջին մէջ կը ծառայէ։ Խեղճ մարդը խոլացած է, խիստ քիչ կը խօսի, և ժամանակը կարդալով կ'անցունէ։

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

ԳԱԼՖԱԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

ԻԶ.ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Շաբաթ առաւօտ՝ Խասգիւղի քարոզիչ Արժ. Մաղաքիա Ծ. Վ. Տէրունեան, Արժ. Ցակոբ Ծ. Վ. Աշըգ, Տ. Միքայել և Աբրահամ քահանայք, Երանուհի մայրապետ, Ռէթէոս էֆ. Թադէոսեան, Գրիգոր էֆ. Մարգարեան, Խաչիկ էֆ. Բիւլահեան, Միքայել էֆ. Նէշաէրճեան և Պետրոս էֆ. Սերոբեան, Գավաֆեան էֆէնտիի կողմէ բարեսիրաբար մայրապետին տրամադրութեան ներքեւ դրուած շոգեմակոյկով Մաքրիգեօյ գացին և Սրբազան Պատրիարք Հայրը Խասգիւղ առաջնորդեցին։ Նաւամատոյցին վրայ Ն. Ամենապատուութիւն ընդունեցաւ խուռն բազմութենէ մը և քանի չափ ոստիկաններէ ու ոստիկան-զինուորներէ։ Ս. Պատրիարք Հայրը՝ շրջապատեալ եկեղեցականներէ և աշխարհականներէ, ուղղակի եկեղեցի գնաց եւ պահ մը հանգիստ առնելէ ետք թաղական խորհրդարանը, ներկայ գտնուեցաւ երեկոյեան ժամերգութեան, յաւարտ որոյ միեւնոյն թափօրով Որբանոց գնաց, ուր ընդունեցաւ որբուհիներուն կողմէ։

Շաբաթ գիշեր սեղան մը տրուեցաւ որբանոցին մէջ։

Կիրակի առաւօտ Ս. Պատրիարք Հայրն հանդիսաւոր Պատարագ մատոյց Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ։ Ն. Սրբազնութիւն գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, յորում ի վեր հանեց բարերարութեան գեղեցիկ առաւելութիւններն, և քարոզն աւարտեց բարեմաղթութեամբք վասն բարօրութեան և արեւշատութեան Վեհ. Սուլթանին։

Եկեղեցական արարողութեան աւարտումէն յետոյ, Ս. Պատրիարք Հայրն հանդիսաւոր թափօրով առաջնորդուեցաւ ի Որբանոց, որուն մատրան մէջ հանգուցեալ Սրբուհի Մայրապետին գերեզմանին վրայ հոգեհանգստեան պաշտօն կատարելէ ետք, Որբանոցին մեծ սրահը գնաց։

Հանդէսը բացուեցաւ Համիտիէ քայլերգով դաշնակի վրայ, որուն ներկայք ունկնդրեցին յոտնկայս։ Ապա որբուհիներէն մին թուրքերէն գրուոր ճառ մը կարդաց, յորում որբուհեաց կողմէ անկեղծ և անհուն երախտագիտութիւն կարտայայտուէր առ Վեհ. Սուլթանն, որ մեծագոյն բարերարն եղած է սոյն հաստատութեան։ Ճառին յաջորդեց Ն. Վեհափառութեան ձօնեալ երգ մը թուրքերէն լեզուով։ Ուրիշ որբուհի մը կարդաց հայերէն ճառ մը, որով երախտագիտութիւն և շնորհակալութիւն կը յայտնուէր ամեն անոնց որք բարերարած են և կը բարերարեն սոյն բարեգործական հաստատութեան և ի մասնաւորի առ հայրախնամ Վեհ. Սուլթանն։ Յաւարտ հանդէսին, Ս. Պատրիարք Հայրը, վարդապետք, քահանայք և ներկայք, որոց մէջ կը գտնուէին Խասգիւղի և Գասըմփաշայի ոստիկանապետները, հրաւիրուեցան սեղանի։ Ս. Պատրիարքը որ կը նախագահէր սեղանին, բաժակ առաջարկեց Վեհ. Սուլթանին կենացը, որուն ներկայք մասնակցեցան խանդագին և յոտնկայս գալով պարպեցին «կեցցէ Վեհ. Սուլթան» աղաղակելով։ Արժ. Ցակոբ Ծ. Վ. Աշըգ բաժակ առաջարկեց Ս. Պատրիարք Հօր կենացը։ Նոյնպէս զանազան անձանց կողմէ բաժակներ առաջարկուեցան հանգուցեալ Սրբուհի Մայրապետին յիշատակին եւ հաստատութեան արդի մայր Երանուհի մայրապետին համար։

Յաւարտ սեղանին, Ս. Պատրիարք Հայրը ժամու մը չափ հանգստանալէ ետք՝ այցելութիւն տուաւ ծերունազարդ Տ. Գէորգ Արծրունի Աւագ քահանային և Եղիա էֆ. Շահպազի։

Որբանոցին մէկ սենեակն յատկացուած էր ձեռագործներու ցուցադրութեան, որք ի վաճառ հանուեցան։ Ոսկեհուռ և ճարտարահիւս ասեղնագործութիւններ, բազմազան նրբաճաշակ բանուածքներ ու զարդեր հրապուրիչ կարգաւ ի տես դրուած էին, որք յայտնի ապացոյց մըն էին ձեռարուեստի մէջ որբուհիներուն յառաջդիմութեանը։ Այցելուներուն մէջ կը նշմարուէին նաեւ երկու անգլիացիներ Պ. Պ. Սայքս և Մաքուաթըր, առաջինն իր կնոջ հետ։ Պ. Սայքս, 26ամեայ երիտասարդ մը, առաջին մեքենագործն է Թէրսհանէի գործարանին։ Անգլիացի այցելուք իրենց հիացումը յայտնեցին այդ ցուցադրութեան համար և շատ մը գնումներ կատարեցին, տասն ոսկւոյ չափ գումար մը ձգելով Որբանոցին։ Ուրիշ անձանց կողմէ եւս բազմաթիւ գեղեցիկ բանուածքներ գնուեցան։

Ս. Պատրիարք Հայրն երեկ գիշեր ալ Որբանոցին մէջ անցուց, ուր իր ներկայութիւնն խանդավառ ոգեւորութեան մը առիթ կ'ընծայէր։

Այս առաւօտ, Ն. Սրբազնութիւն, իր հայրական օրհնութիւնները տալէ ետք որբուհիներուն և Երանուհի մայրապետին, մեկնեցաւ Որբանոցէն և նոյն շոգեմակոյկով վերադարձաւ ի Մաքրիգեօյ։

Տրապիզոնի Առաջնորդ Գեր. Եղիշէ Ծ. վարդապետ Այվազեան, շաբաթ իրիկուն հեռագիր մ'ուղղելով առ Արժ. Տէր Ցովհ. Աւագ Քահանայ Մկրեան, յանուն վիճակին ժողովրդեան ցաւ յայտնած էր հանգուցեալ Գարեգին Սրբազանի հիւանդութեան վրայ, եւ խնդրած էր իմանալ թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի։

Արժ. Մկրեան Հայրն, ի պատասխանի, նոյն գիշերը հեռագրաւ հաղորդեց Գեր. Սրուանձտեանց Սրբազանի ցաւալի մահը, որ անշուշտ արտայայտուած վշտին պիտի մասնակից ընէ Տրապիզոնի բովանդակ հայ ժողովուրդը, որոց Առաջնորդն ու Եպիսկոպոսն եղած էր հանգուցեալն։

Ցաւօք կը ծանուցանենք թէ Մ···ի Լէ··· լրագիրն երեկուընէ սկըսեալ դադարման դատապարտուած է Տպագրական Տեսչութեան հետեւեալ պաշտօնագրով.

«Մ···ի Լէ··· լրագիրը կանոնաց հակառակող ընթացից մէջ գտնուած ըլլալով՝ այսօրուընէ սկսեալ անպայման կերպիւ դադարման դատապարտուած է»։

22 Նոյեմբեր

Վանայ պատրիարքական փոխանորդ Արժ. Ցովսէփ Ծ. վարդապետ Այվազեան շաբաթ օրը Դատական պաշտօնատունն երթալով տեսակցեցաւ Նախարար Վեհմ. Րիզա փաշայի հետ։

Երուսաղեմայ միաբաններէն Արժ. Գաբրիէլ Ծ. վարդապետ Անդրեան որ Նուիրակի պաշտօնով Կալկաթա կը գտնուէր, Ռանկուն ուղեւորեր է, ուրկէ Ճավա, Մատրաս և այլ հայաբնակ վայրեր պիտի երթայ միեւնոյն պաշտօնով։

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Սեպտեմբերի 26ին Ս. Էջմիածնի հոգեւոր Ճեմարանը տօնեց իւր գոյութեան 18երորդ տարեդարձը։ Ս. Պատարագից յետոյ Միաբանութիւնը շուրջառաւորուած հանդիսաւոր Շարական երգելով դուրս եկաւ եկեղեցուց և կանգնելով հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթուղիկոսի գերեզմանի շուրջը Ճեմարանի աշակերտներով հանդերձ, կատարեց հոգեհանգստեան կարգը, որից յետոյ Ճեմարանում տեղի ունեցաւ ուսումնական տարւոյ հաշուետուութիւնը, ի ներկայութեան Միաբանութեան և բազմաթիւ ժողովրդեան, Ճեմարանի ուսուցիչների և աշակերտների։ Նորին Ամենապատուութիւն Տէր Տեղակալը օրհնութեամբ բաց արեց հանդէսը և ապա աշակերտների երգեցիկ խումբը երգեց Ս. Գէորգի «Մանկունք» Շարականը։ Տեսչի օգնական Պ. Սաղաթէլեանը կարդաց ուսումնական տարւոյ մանրամասն հաշիւը։ Ճեմարանի նախկին սանեբից Պ. Արշակ Տէր-Միքայէլեանը, որ այս տարի աւարտելով արտասահմանում իւր ուսման ընթացքը հրաւիրուեց Ճեմարան աստուածաբանութեան ուսուցչի պաշտօնով, կարդաց ճառ։

Աշակերտները մէջ ընդ մէջ երգում էին երգեր. հանդիսից յետոյ Ամենապատիւ Տէր Տեղակալ Սրբազանը հանդէսը կնքեց պահպանիչով։ Երեկոյեան Ճեմարանի գաւթում հրավառութիւն և ճրագալոյց կար, ուր ժողովուած էին Վաղարշապատի հասարակութիւնը և ուխտաւորների բազմութիւն։ Ճեմարանի աշակերտները իւրեանց ներդաշնակ երգեցողութեամբ մեծ բաւականութիւն և զուարճութիւն պատճառեցին հասարակութեան։ Ցոյց տրուեցան մոգական լապտերով պատկերներ։ Առաջին անգամ երբ երեւաց Ճեմարանի հիմնադիր հանգուցեալ Գէորգ Դ.ի պատկերը, ժողովուրդը մի խորին զգացմամբ յարգանք արտայայտեց դէպի հանգուցեալ հայրապետը. այնուհետեւ յաջորդաբար ցոյց տրուեցան Ցիսուսի տնօրինական պատկերներ։ Հրավառութիւնը շարունակուեց գրեթէ մինչեւ ժամը 10ն և ցրուեց ժողովուրդը միխիթարուած և ուրախ տպաւորութեամբ։

(Արարատ)

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Բերկրութեամբ կ'իմանանք Հրանտ Ասատուր էֆէնտիի նշանախօսութիւնն Ազն. Օրիորդ Վիքթորիա Սարաֆեանի հետ, դուստր Սարաֆեան Ցարութիւն էֆէնտիի։

Օր. Սարաֆեան հայ իգական սեռի շնորհալի անդամուհիներէն է եւ «Մասիսի» համակրելի տնօրէնը՝ մեր երիտասարդութեան փայլերէն մին։ Այս նշանախօսութիւն որ կիրակի գիշեր տեղի ունեցաւ ի Բերա, ընտանեկան շրջանակի մէջ, ուրախութեամբ կը լնու Ասատուր և Սարաֆեան ընտանեաց բազմաթիւ բարեկամները։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ճարտար նկարիչ մեծարգոյ Պ. Մկրտիչ Պարսամեանց յաջողած է ամենայն ճշգրութեամբ նկարել վաղամեռիկ քերթող Պետրոս Դուրեանի մեծադիր պատկերն, առանց՝ ի կենդանութեան նորա՝ տեսած լինելու զնա, այլ միայն Դուրեանի կրտսեր եղբօր՝ Աբրիպպաս էֆէնտիի դէմքէն օգտուելով և շինած պատկերն հետզհետէ ուղղելով ըստ դիտողութեանց հանգուցեալին ազգականաց և մերձաւոր ծանօթից, այնպէս որ Պ. Պարսամեանց՝ ըստ նոյն ազգականաց և ծանօթից գրաւոր վկայութեանց՝ ի ձեռին ունի այսօր բանաստեղծին կենդանատիպ և ճշգրիտ նմանութիւնը ներկայացնող պատկեր մը։

Դուրեանի լուսանկարն ունենալ ցանկացողներուն գոհացում տալու համար, Պ. Պարսամեանց փափագելով իւր գծած սոյն պատկերէն լուսանկարն եւս հանել բազմաթիւ օրինակ, առ այս բաժանորդագրութիւն բացած է, մեծը (քապինէ) 5 ղրուշ, փոքրը (վիզիթ) 100 փարա։ Գաւառներէն փոստի ծախքն եւս պէտք է ղրկել։

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.— Իւրայի երկրորդ աստիճան տրուեցաւ Ոստիկանութեան Դրան անցագրոց դիւանին տնօրէն Խանտանեան Արմին էֆէնտիի։

Սանիյէ Միւլթէմարիդի աստիճան՝ Սպարապետի Դրան ընդհանուր հաշուակալութեան երկրորդ ճիւղի քարտուղարներէն Րիֆաթ պէյի և Ոստիկանութեան Դրան բժիշկներէն Ճելալ ու Սիմոն պէյերու։

Երրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ ծովային ոստիկանաց պետ Մանօլաքի Կալիչի էֆէնտիի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ Կալաթա Սէրայի թարգման Նիքօլաքի Կալիչի էֆէնտիի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.—Ուրբաթ օրը, Սէլամլըքի արարողութենէն յետոյ, գերմանական դեսպան Ռատօլին Ռատօլինսքի իշխանը Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ. . .

ՀՆՏԱԽՏ.—Նոյեմբեր 21ին ի Վան՝ 10 դէպք ու 6 մահ։ Զինուորներէ ո և է մահ չէ պատահած։ Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

—Նոյեմբեր 21ին եւս ի Կարին թէ զինուորներէն և թէ ժողովուրդէն ո և է դէպք ու մահ չէ պատահած։

—Նոյեմբեր 21էն 22, Տրապիզոնի մէջ ո՛չ դէպք պատահած է և ո՛չ ալ մահ։

—Նոյեմբեր 20ին ու 21ին յԵրզնկա 3 դէպք ու 1 մահ։ Ի Բաբերդ՝ 2 մահ ու 3 դէպք։

—Հոտէյտայի ու շրջակայից մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է։

—Վեհ. Սուլթան հրամայած է յորդոր կարդալ հնտախտէ վարակեալ տեղերու ժողովրդեան՝ որ վազուն ջուրերը եռացնելէ յետոյ միայն խմեն. եթէ թէյ չը գտնուի [illegible] եփելով խմեն։ Կայս. սոյն Իրատէն հաղորդուած է պէտք եղած տեղերը։

—Սեւ ծովու վարակեալ տեղերէ եկող նաւերը ցարդ ի Գավաք Պէօյիւք Լիմանի մէջ քարանթինա կ'ընդունէին, սակայն ձմեռուան պատճառաւ այդ նաւեր Ումուր Եերիի մէջ քարանթինա պիտի ընդունին, ուր պիտի կրնան պատսպարուիլ գէշ օդերու դէմ։ Գրուած է ծովային Նախարարութեան ու Թնդանօթարանի վերատեսչութեան, որ նոյն մաքրանոցն ծովու եւ ցամաքի կողմէ զինուորաց միջոցաւ պահպանելու համար հարկ եղածն ի գործ դնեն։ Այդ տեղը տաղաւարներ և այլ առողջապահական շէնքեր պիտի կառուցուին։

ԿԱՅՍ. ՀՈԳԱՑՈՒԹԻՒՆ.— Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ նախկին Խտիվ Իսմայիլ փաշայի որդիներէն Քէմալ փաշա, որ ի Վիէննա կը գտնուի, հիւանդացած է, հրամայած է որ ծախքը կայս. մասնաւոր Արկղէն վճարուելով, Վիէննայի ճարտար բժիշկներէ մին խնամէ Քէմալ փաշան։ Կայս. սոյն Իրատէն հաղորդուած է Վիէննայի օսմանեան դեսպան Զիեա պէյի։

Զիեա պէյ կայս. սոյն հրամանը հաղորդած է Քէմալ փաշայի, որ բարեմաղթութիւններ ըրած է վասն կենաց Վեհ. Սուլթանին։ Վիէննացի հռչակաւոր բժիշկ տոքթ. Տրաշի, ի ներկայութեան դեսպան Զիեա պէյի, Քէմալ փաշայի հիւանդութիւնը քննելով յայտարարեր է թէ հիւանդութիւնը վտանգաւոր հանգամանք մը չունի և թէ հիւանդն ի մօտոյ բոլորովին պիտի ապաքինի։ Բժիշկին այս տեղեկագիրը դեսպան Զիեա պէյի կողմէ արտաքին գործոց Նախարարութեան ղրկուած և անոր մատուցուած է Վեհ. Սուլթանին։ Այդ նպաստաւոր տեղեկագրոյ եզրակացութիւնը հաղորդուած է նաեւ Նախկին Խտիվ Իսմայիլ փաշայի։

ԳԱՐԱՔԷՕՅԻ ԿԱՄՈՒՐՋԸ.— Վեհ. Սուլթանն հրամայած է որ Գարաքէօյի կամուրջին երկու կողմերը գտնուած ոստիկանաց թիւերն աւելցուելով, անցուդարձը բոլորովին արգիլուի կամուրջին բաց եղած ատենն, որպէս զի անցեալ օրուան արկածին նման ցաւալի արկածներ չպատահին։

ՄԱԼԻՔԷԻ պաշտօնատան մէջ շաբաթ օրը յանձնաժողով մը ի նիստ գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Նախարար Վեհմ. Նազիֆ էֆէնտիի եւ զբաղեցաւ մէկ քանի գաւառաց հաշուակալներու ընտրութեամբ։

—Նոյն օրը Մալիյէի մէջ ի նիստ գումարուեցաւ նաեւ այն յանձնաժողովն որ պաշտօն ունի կանոնագիր մը պատրաստել ի մասին օտար թէնպէքիներու մաքսային գործողութեանց։ Ցանձնաժողովն երէկ աւարտեց իւր պաշտօնը։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ.—Պարսիկ կառավարութիւնը Առիւծու և Արեւու պատուանշանի երրորդ աստիճանը նուիրած է մայրաքաղաքիս վաճառականներէն Ցակոբ էֆէնտի Շէրպէթճեանի։

ԻՄԹԻԱԶԻ ՇՔԱԴՐԱՄ.— Կայս. Իրատէ մը արտօնած է որ գաղթականաց յանձնաժողովին փոխ-նախագահ Պէհճէթ պէյ կրէ իւր հօրը՝ նուիրական վայրերու նախկին տնօրէն վախճանեալ Ալի Րիզա էֆէնտիի ունեցած Իմթիազի ականակուռ շքադրամը։

ՎԱՐՁՈՒ ԿԱՌՔԵՐ.— Քաղաքապետութեան որոշմամբ, որ վաւերացած է Պետական Խորհրդոյ կողմէ, վարձու կառքերու կառապանները տասն և հինգ տարեկանէն վար չպիտի ըլլան, վկայականներ պիտի ունենան, միանգամայն հագուստ պիտի կրեն, կառքերուն մէջ սակացոյցեր ու ապակիներուն վրայ իւրաքանչիւր Քաղաքապետութեան շրջանակի թիւն և թուահամար մը պիտի գտնուին, կառքերու կարասիներն նոր ու մաքուր պիտի ըլլան և ձիերն ալ առոյգ և վարժ։

ՊԱԼԸՔԷՍԻՐ ղրկուած քննիչ մարմինը շաբաթ օրն իւր տեղեկագիրը մատոյց Բ. Դրան։

ԱՏՏԸՆԻ երկաթուղւոյն տնօրէն Պ. Բիւրգէր մենաշնորհ խնդրած է Գասապա Գօնեայի երկաթուղւոյն համար։

ՈՐԹԱԼՈՒՔԻ յանձնաժողովն շաբաթ օրն ի նիստ գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Հանրօգուտ շինութեանց Վեհմ. Նախարարին և կարեւոր խորհրդակցութիւններ կատարեց։

ՇԻՔԱԿՕՅԻ Արուեստահանդէսը ղրկուելու համար բոլոր գաւառներէ ասոր ապրանքներ պիտի բերուին, սակայն մէկ քանի գաւառներ այդ առաքումը ցարդ կատարած չըլլալով և նկատելով որ արուեստահանդէսի բացման թուականը մօտեցած է, կայս. Իրատէ մը հրամայած է որ այդ կարգի գաւառաց բերքերն ու արտադրութիւնները ի մայրաքաղաքս գումարելի յանձնաժողովոյ մը կողմէ հաւաքուին։ Ելմտական գանձէ պիտի վճարուի նոյն յանձնաժողովին յանձնուած գաւառական բերքերու ու արտադրութեան գինն, և անոնք որք իրենց ապրանքներն ուղղակի Շիքակօ ղրկել ուզեն, ըստ այնմ պիտի ղրկուին։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— «Սապահ» կ'իմանայ թէ Բերայի Տօլապ Տէրէսի թաղին ոստիկան Հիւսէյին էֆէնտի, իւր պաշտօնին կիրառման պահուն պահականոցին մէջ Բանչօ անուն մարդ մը ծեծած ըլլալով քանի օրուան բանտարկութեան դատապարտուած է։

ԹՂԹԱՏԱՐՔ.— Վաճառականք ոմանք աղերսագրով մը թղթատարական վերատեսչութեան դիմեր և յայտարարեր յետոյ թէ Վանայ, Մշոյ, Կարնոյ և շրջակայից թղթատարներն, որք տասն օրը մէկ անգամ կը ժամանէին, յիսուն օրէ ի վեր չեն հասած, պարագայ մը որ կը վնասէ առեւտրական գործողութեանց, խնդրած են առ այդ հարկ եղածն ի գործ դնել։

ՔԱՂԱՔԱՑԻՆ բժշկական վարժարանին համար անդամազննութեան, (Ա. մաս), գործարանական քիմիագիտութեան, բնախօսութեան, ներքին ախտերու, ախտաճանաչութեան, արտաքին ախտերու, բժշկական իրաւաբանութեան, մանկաբարձութեան, կենդանաբանութեան եւ վիրահատութեան ուսուցչի օգնականներու պէտք ըլլալով, փափաքողք կրնան մինչեւ մէկ ամիս զինուորական բժշկական վարժարանը դիմելով իրենց անուններն արձանագրել տալ մրցման քննութեանց մասնակցելու համար։

ԴՐԱՄԱՆԵՆԳ.— Բերայի ոստիկանութիւնն անցեալ օր Հաճի Վէլի ու Հաճի Մուսա անուն երկու դրամանենգներ ձերբակալեց, որոց բնակարանները խուզարկուելով քառասունէ աւելի երկուքուկէսնոց կեղծ ոսկիներ գտնուեցան։

ՁԻՒՆ.— Այս շաբաթ օրէն սկսեալ Ադրիանուպոլսոյ մէջ փոթորիկներ ծագելով, քաղաքին ու շրջակայից մէջ առատ ձիւն տեղացած է։

—Գոնեայէն նոյեմբեր 22 թուականաւ կը հեռագրեն թէ Գարամանի ու շրջակայից մէջ ձիւն տեղալով բարձրութիւնը մէկ կանգունի հասեր է և ճամբաները գոցուեր են։

—Գասթամունիի ու շրջակայից մէջ եւս առատ ձիւն տեղացած է։

ԻՆԷՊՕԼՈՒԻ մէջ երեք օր երեք գիշեր անընդհատ անձրեւ տեղալով հեղեղներ գոյացեր և այլեայլ շէնքեր վնասուեր են, խճուղին աւրուեր է։

Պ. ՔԱՋՆԵՕՎ

Հռչակաւոր ձեռնածու Պ. Քաջնեօվ մայրաքաղաքս եկած ըլլալով, հրապարակային ներկայացում տալէ առաջ այս գիշեր մասնաւոր ներկայացում մը պիտի տայ տեղական մամլոյ ներկայացուցիչներուն, ի Բերա, Կրանտ Օթէլ տը լա Պրըթանիի մեծ սրահին մէջ։

ԱՆԱՏՕԼՈՒԻ երկաթուղեաց արտօնատէր Պ. Քաուլայի իմաց տրուած է թէ ընկերութեան վարչութեան խորհրդոյ անդամներէ ոմանք մայրաքաղաքս պիտի գան, Էնկիւրիի գծի վերջին մասի բացման ներկայ գտնուելու։

ԱՐԿԱԾՔ.— Շաբաթ օրը Մաքրիգեօյի մօտ գրաստ մը երկաթուղւոյ կառախումբին տակ մնալով ճմլուեցաւ։

—Ուրբաթ օրը Ոսկեղջիւրի մէջ ձկնորսի նաւակ մը Ոսկեղջիւրի շոգենաւերէ միոյն անիւներուն տակը մնալով խորտակուեցաւ, սակայն ձկնորսն ազատուեցաւ։

—Շաբաթ իրիկուն Պոլսոյ կողմը Ֆինճանճըլար Եօգուշէն իջնող կառքի մը ձիերը խրտչելով կազմածները բրդուցին և սկսան քառասմբակ արշաւել, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ ձիերը կեցուցուեցան և վտանգին առաջքն առնուեցաւ։ Կառքին մէջ երկու կիներ ու երկու տղաքներ կը գտնուէին։

—Անգլիական շոգենաւ մը երէկ առաւօտ Պաղչէգիւղի առջեւ խրեցաւ, սակայն քիչ յետոյ ազատուեցաւ։

ՄԱՀԱՑՈՒՅԱԿ.—Վերջին շաբթուան՝ Նոյեմբեր 14էն 20, մայրաքաղաքիս մէջ 240 մահեր պատահած են, որոց 129ը այր և 111ը կին։ Ասոնցմէ 126ը իսլամ (61 այր, 65 կին), 99ը քրիստոնեայ (61 այր, 38 կին) և 15ը հրեայ (7 այր, 8 կին)։

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց ժողովը նկատողութեան առած է Պ. Քրիպէի մատուցած ծրագիրն, որով կառաջարկուի երկաթուղի մը շինել Տրապիզոնէն մինչեւ Պայազիտ։ «Սապահ» կը կարծէ թէ այս աղերսագիր չպիտի ընդունուի, որովհետեւ խնդրարկուն երկաթուղւոյ անցնելիք տեղերուն տասանորդի տրոց մէկ մասը կը պահանջէ և այդ գծի շինութիւնն տեղւոյն դիրքին պատճառաւ շատ մը զոհողութիւններ կը պահանջէ և մինչեւ մէկ աստիճան դժուարութեանց ալ պիտի հանդիպի։

ԱԶԳ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

Բէչգայի և Վիէննայի միջեւ ձիւներու կուտակման պատճառաւ, նախընթաց օրուան սերպիական կառախումբը պարտաւորուած է Պելկրատէն մեկնիլ հանգարական կառախումբին ժամանումէն առաջ։ Հետեւապէս, այս իրիկուն աստ հասնող կառախումբը սուրհանդակ չպիտի բերէ։

Կ. Պոլիս 5 Դեկտ.　　ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՇԱՀԱԳՐԳԻՌ

Անցեալ հինգշաբթի օրուան քաշուած Թուրք. Երկաթուղեաց վիճակահանութեան մէջ մեր անուամբ և մեր դրամատնեկէն ծախուած բաժիններուն շահածներուն մէջէն, հետեւեալ երկու թուակիր բաժիններուն տէրերը մինչեւ հիմա երեւան ելած չըլլալով, կը ծանուցուի որ ով որ ՏԻԳՐԱՆ Մ. ԱՐԶԸԼԵԱՆ բաժիններէն գնած է, թէ աստ և թէ ի գաւառս, աճապարութեամբ նայի իւր թիւին։

Ահաւասիկ թիւերը

649522 400 ֆրանք։

649521 400 ֆրանք։

Սոյն թիւերը մեզ բերողներուն, անմիջապէս պիտի վճարենք շահուած դրամը, ինչպէս որ վճարեցինք միւսները։

Ղալաթիա, Կամուրջին գլուխ թիւ 33

Տիգրան Մ. Արզըլեան

Տես չորրորդ երես ԲՐԻՆԹԱՆԻ մեծ վաճառատան ծանուցումը։

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ
Ի ՆՊԱՍՏ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑԻՆ

Համազգային Անկելանոցին ի նպաստ կազմակերպեալ ձայնական ու գործիական Նուագահանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, 28 նոյեմբեր— 10 դեկտեմբեր, գերմանական դեսպանատան մեծ սրահին մէջ։ Գերմանական դեսպան Բարձր. Ռատոլին իշխանն իւր հովանաւորութեան ներքեւ առած է սոյն հանդէսն, որ ոչ միայն իւր մարդասիրական բարձր նպատակովը, այլ և երաժշտական ճոխ յայտագրովն ու առաջնակարգ արուեստագիտաց մասնակցութեամբը՝ մեծ յաջողութիւն կը խոստանայ։ Նուագահանդէսի տնօրէնութիւնն ստանձնած են պարոնայք Օ. Տէթիէ և Բօլ Լանկէ, որոնց պիտի նուիրեն իրենց աջակցութիւնը՝ տիկնայք Կրօսէռ, Քօմէնտինկէր և Տէթիէ, պարոնայք՝ Պրասէն, Քօֆման և Սթիւսի, գերմանացի երաժշտաց ընկերութիւնը ինչպէս նաեւ նուագածուաց ամբողջ խումբ մը։ Նուագահանդէսը բաժնուած է երկու մասի։ Ա. Մաս—Զինուորական մեծ Մարշ (Բօլ Լանկէի),— Քօնսէռ Միլիթէռ (Լէբինսքի) — Վէսօ-Ֆանթէզ օբէռային հատուած մը (Վակնէրի)—Նուագ և Երգ (Ֆօրի և Ռէյէրի)—Քօնսէռ դաշնակի համար (Շօբէնի)։ Բ. Մաս—Գերմանական եղանակ մը նուագախումբին կողմէ, և ուրիշ երեք եղանակներ՝ տիկին Քօմէնտինկէրի, տիկին Տէթիէի և Պ. Սթիւսիի կողմէ։—Վակնէրի «Ռիէնցա» օբէռաին սկզբնաւորութիւնը խմբերգով։

Նուագահանդէսը տեղի պիտի ունենայ միջօրէէն յետոյ ժամ 2 ին (Ը. Ե.)։ Մտից տոմսի գինն է մէկ օսմ. ոսկի։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Ֆրանսական խումբն վաղը գիշեր Թէփէ-Պաշըի թատրոնին մէջ պիտի ներկայացունէ ԼԸ ՔԵՕՌ Է ԼԱ ՄԷՆ (Le cœur et la main) օբէռա-գոմիք երեք արարուածով։ Միքայէլայի դերը պիտի կատարէ տիկին Ալիս Ռէն։

ՍԻՐՔ-ԹՈՒՌՆԻԷՌ

Սիրք-Թուռնիէռը կը շարունակէ իր շահեկան ներկայացմանց շարքն ամեն գիշեր։ Վաղը, երեքշաբթի, դեսպանական երեկոյթ, յոյժ ճոխ յայտագրի մը համաձայն։

ՀԵՌԱԳԻՐ

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ Ի ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻԶ, 2 Դեկտ.— Ելմտացոյցի յանձնաժողովոյն նախագահ Պ. Քազիմիր Բէրիէ և հրաժարեալ վարչութեան կրթական նախարար Պ. Պուրժուա իրենց գործակցել չուզելով, Պ. Հանրի Պրիսոն ետ կեցաւ նոր նախարարարութիւնը կազմելէ։

3 Դեկտ.— Պ. Քազիմիր Բէրիէ նոր վարչութիւնը կազմելու պաշտօնն ստացաւ։ Խորհրդակցեցաւ Պ. Պ. Ռիպոյի և Պուրժուայի հետ։ Բայց ի վերջոյ ինքն եւս ետ կեցաւ նոր վարչութիւնը կազմելէ, և Պ. Քառնօ կանչեց զՊ. Պուրժուա, անոր յանձնելով նախարարապետի պաշտօնն և նոր վարչութիւնը կազմելու փորձը։

ՊԱՆԱՄԱՅԻ ԳՈՐԾԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ

ՓԱՐԻԶ, 2 Դեկտ.— Ձեռագիր ճանչցող մասնագէտ Պ. Ֆլօռի, որ քննած է Պանամայի ընկերութեան տումարները, չուզեց վկայութիւն տալ քննիչ յանձնախմբին առջեւ, ըսելով թէ պաշտօնիս բերմամբ գիտցած գաղտնիքներս մարդու չեմ կրնար զրուցել։

—Պ. Ֆլօռի նախորդը, Պ. Ռօսինեօլ, ըսաւ յանձնաժողովոյն թէ Պանամայի գործին հրատարակութեան (լրագրաց) ծախքը 20 միլիոն ֆրանքէն աւելի է։ Տումարաց մէջ քաղաքական մարդու անուն չէ գտած։

Սակարանի միջնորդութեան տան մը տնօրէն Պ. Թիէռէ յայտարարեց թէ Պարոն տը Րեյնաք Ֆրանսայի Պանքային յանձնած լինելով 3,900,000 ֆր. այս տան հաշւոյն, Պանքան 27 չէք տուած է։ Բայց ինք չուզեր ըսել թէ չէքերն որո՛ւ անուամբ էին։ Ասոր վրայ, յանձնաժողովոյն երեք անդամներ Պ. Թիէռէի հետ անոր բնակարանն երթալով, իւր գրպանի տետրակին մէջ չէքերու թիւերն և անոնց գումարը գտան և ընդօրինակեցին։

Ցանձնաժողովը խնդրեց դատական նախարար Պ. Ռիքառէ որ չէքերը գրաւել տայ։ Նախարարն ըսաւ թէ ընդհանուր դատախազին պիտի իմացնէ։

Պ. Քէնէ տը Պօրբէռ, ընդհանուր դատախազն, որ յանձնաժողովոյն առջեւ վկայութիւն տալ չուզեց, ինքնին չպիտի հրաժարի, այլ պաշտօնանկ պիտի ըլլայ։

—Կը կարծուի թէ Պանամայի խորհրդարանական քննիչ յանձնաժողովը մինչեւ շաբթուան վերջն աշխատութիւնները պիտի աւարտէ։

—Ցանձնաժողովն հրամայեց դատական իշխանութեան՝ գրաւել Թիէռէի երկու չէքերը։ Պ. տը Ռոչիլտ ծանոյց թէ ինք Ֆրանսայի Պանքայէն ընդունած է հատը մէկ միլիոննոց երկու չէքերու փոխարէնն, որք տրուած էին ի վճարում Ֆրանքֆորդի Ռոչիլտեան տան։

—Հարցաքննիչ դատաւոր Պ. Բրինէ, որ Պանամայի գործին նախաքննութիւնը կատարած է, ըսեր է Պ. Լը Բառվիի թէ 600 անձինք դրամ ընդունած են Պանամայի գործին յաջողութեան համար։ Այս լսելով, յանձնաժողովն որոշեց իւր առջեւ կանչել զՊ. Բրինէ։

—Նախորդ նախարար մը օրին մէկը գոց պահարանով Պ. Քառնոյի մատուցեր է ամբողջ ցուցակն այն անձանց որք կասկածի տակ են Պանամայի գործին առթիւ։

—Պ. Ռիպօ հեռագիր մը ստացաւ, ծանուցանող թէ Պանամայի ջրանցքի ընկերութեան արտօնութիւնն երկարաձգող օրինական ծրագիրը Քոլոմպիոյ Հանրապետութեան Ծերակոյտէն ընդունուած է, բայց որուն Քոլոմպիոյ Խորհրդարանին երկուց ծովովոց վաւերացման կը կարօտէր՝ օրինական ոյժ ունենալու համար։

—Միւս կողմէ, լուր եկած է թէ Ամերիկացիք Բանամայի ջրանցքին զուգահեռաբար ի Նիքարակուա շինած ջրանցքին յառաջ կը տանին։ Այս ջրանց եւս Ատլանտեանը պիտի միացնէ Խաղաղականի հետ։

ՖՐԱՆՍԱՑԻՔ Ի ՏԱՀՈՄԷ

ՓԱՐԻԶ, 3 Դեկտ.— Զօր. Տոտս կը հաւաստէ թէ Ապոմէյէ մեկնած և Նոյմ. 30ին Բորգօ-Նովօ դարձած է, Տահոմէի մայրաքաղաքին մէջ թողլով գնդապետ մը ի հրամատարութիւն հոն մնացեալ զօրաց։ Ուիտանի բնակիչք ընդունած են Ֆրանսայի գերիշխանութիւնը։ Զօրքը մինչև Ալլատա պիտի յառաջանայ երկրին լիակատար գրաւումն ապահովելու։

ՊՐՈՒՍԷԼ, 3.—Դրամական Դեսպանաժողովոյ յանձնաժողովոյն տեղեկագիրն աննպաստ է Պ. Ալֆրէտ տը Ռոչիլտի ծանուցեալ ծրագրին։

ՄՈՒՆԻԽ.—Քարլ Իշխան, ծնեալ 1874ին, երկրորդ որդի Լուտվիկ Իշխանին, երկուշաբթիէն ի վեր բացակայ է։ Կը կարծուի թէ իւր ծնողաց բացակայութենէն օգուտ քաղելով, գաղտնապէս մեկնած է՝ ոտքով պտոյտ մ'ընելու լեռները։

ՊԵՐԼԻՆ.—Ռայխսթակի մէջ Պ. Լիպքնեխդ սա կարծիքն յայտնեց որ Գերմանիա պէտք չունի վախնալու Ռուսիայէն. զի պատերազմ ծագելուն պէս, կը բաւէ որ Գերմանիա կամք յայտնէ Լեհաստան նախկին դրութեան վերածելու, և այն ատեն մեծ և միայն բանակի մը պէտք չունենար Գերմանիա, և կարող է շատանալ տեղային զինուորութեամբ։

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

Նոր Նախարարութիւնը դեռ չէ կազմուած

ՓԱՐԻԶ, 4 Դեկտ.—Հրաժարեալ նախարարութեան մէջ երկրագործական նախարար Պ. Տըվէլ երէկ և այսօր խորհրդակցեցաւ Պ. Քազնոյի հետ։ Պ. Պ. Պուրժուայէ, Ռիպոյի և Քազիմիր Բէրիէի հետ նոր վարչութիւն մը կազմել կ'աշխատի, որոյ պետը պիտի ըլլայ Պ. Ռիպօ։

ՆԻՒ-ԵՈՐՔ.—Պ. Ճէյ Կուլտ, Միացեալ Նահանգաց ամենէն հարուստ անձը, մեռաւ։

ՊՈՒՔՐԷՇ.—Զաքքայի դատին շարունակութիւնն յունուար 15|27ին թողուց դատարանը։

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 23 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ		110 ½
3 » Փարիզի	»	22 75

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՕՆՍՕԼԻՏԷ

Երէկ երեկոյ փակ. (Միաց. Դ. Սէրի)		23 27
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	23 26
Կէս օրին		23 26
Թահվիլաթը Օսմանիյէ, երէկ երեկոյ		82 20
» » ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Սէրի	55
»	»	30 ½
»	»	23 37

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.	3 10
Քրէտի ժէնէրալ	» »	8 05
Պանք տը Բօնս	» »	5 07
Յօս. Շանժ է վալէօր	» »	4 26
Րէժի	» »	15 39
Թրամուէյ	» »	632 ½
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	89 ½
Բաժնեթուղթ Լաւրիոնի		85

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	Ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 34
Անգլիական ոսկի	»	110 23
Մարք Գերմանական ոսկի	»	107 20
Իմբէրիալ	»	90 05
Քրիմիդ	»	51 20
Ռուպլ Թղթադրամ	»	9 47
Մեճ. արծաթ (տարբ.)	»	107 35
Մանր արծաթ	»	102 30
Մէթալիք	»	97
Թաաֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 3 Դեկտեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 %	99 45
» » 4 ½ %	105 32 ½
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ.	21 65
Օսմ. մաքս. արժեթուղթ	471 25
Բրիօրիթէ Թիւրք (1890)	429 37 ½
Օսմանեան Երկաթուղի	90 25
» Րէժիի բաժնեթուղթք	362 50
Պանք Օթոման	591 25
Քրէտի Լիոնէ	780
Իտալական Ռանթ 3 %	93 42 ½
Եգիպտական միացեալ	495
Չէք Լոնտրայի վրայ	25 14
Օսմանիյէ Օսմանեան քօնսօլիտէ)	373 75

ԼՈՆՏՈՆ, 3

Անգլ. քօնսօլիտէ	97 06
Օսմ. » Սէրի Դ.	21 37
» » » Ա.	55
» » » Բ.	30 ½
» » » Գ.	21 ½
Օսմ. փոխառութիւն 1871	96
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	93
Պանք Օթոման	13 ½
Իզմիրի երկաթուղի	19 ½
Գասապայի երկաթուղի	11 ½
Եգիպտական միացեալ (Ունիֆիյէ)	98 ½
» առանձ. բրիվիլէժիէ 1890	102 ½
Տօմանիալ (փոխառ. Ռոչիլտ)	103
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 336

ՎԻԵՆՆԱ, 3

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 15
» Փարիզի »	47 70
Օսմանեան Րէժիի բաժնեթուղթք	169 75
» Երկաթուղի	45 60

ՊԵՐԼԻՆ, 3

Օսմանեան երկաթուղի	91
Օսմ. Րէժի	180 20
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 240
» Փարիզի »	— —

ՓԱՐԻԶ ԲԹԻՔ ՊՈՒՐՍ

ՓԱՐԻԶ, 3

Ֆրանսական Ռանթ 3 %	99 30 ½
Եգիպտական միացեալ	— —
Օսմ. քօնսօլիտէ Սէրի Դ.	21 60
Օսմ. երկաթուղի	89 62 ½
Օսմ. Րէժի	361 25
Օսմ. մաքս. արժեթուղթ	469 37 ½
Բրիօրիթէ Թիւրք	429 37 ½
Պանք Օթոման	591 25
Օսմանիյէ	— —

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏԻՐԱՄԱՅՐԸ

Շաբաթ օրը, սեպտեմբեր 21ին, տօնեցաւ «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն»։ Այս տօն անփոփոխ է։ Մարիամ զաւակ էր Յովակիմայ և Աննայի, որք տրտում տխուր կ'ապրէին և ամէն տօնի օրերուն լալով յԵրուսաղէմ տաճարին մէջ կ'աղօթէին և կ'աղաչէին Աստուծոյ, որ գոնէ մէկ հատ զաւակ ունենան։ Յովակիմ եւ Աննա զաւակ ունենալու կը փափաքէին, վասն զի Իսրայէլի մէջ զաւակ չունենալն ամօթ բան էր։ Աստուածային անէծքի տակ գտնուած կը համարուէին այն ծնողք որք զաւակ չէին ունենար յետ ամուսնութեան։ Ցանը ճրագն, ինչպէս հիները կը զրուցէին, զաւակն էր, և այս ճրագը կը մարէր, եթէ ծնողք ամուլ լինէին։

Իսրայէլի մէջ հաւատք կար, թէ ով որ զաւակ չունենայ և ուխտէ տաճարին ընծայել անդրանիկը, պիտի ունենայ զաւակներ։ Սրտաուչ է Սամուէլի ծննդեան պատմութիւնը Սուրբ Գրքին մէջ, ինչպէս և աւելի սրտաուչ է Սուրբ Կոյս Մարիամի, Յիսուսի մօր ծննդեան այս պատմութիւնն, որ յաւանդութենէ ի գիր առնուած կայ եկեղեցական հին գրքերու մէջ։ Յովակիմ և Աննա կ'ուխտեն որ եթէ զաւակ ունենան, թէ մանչ և թէ աղջիկ, ընծայեն Աստուծոյ, և ահա ծերութեան օրերու մէջ այս բարեպաշտ ծնողք կ'ունենան աղջիկ զաւակ մը։ Եւ որովհետեւ միանգամայն սա հաւատքը կար թէ աշխարհի Փրկիչն՝ այսինքն հեթանոսաց լոյսը՝ պիտի ծնի կուսէ մը, ուստի կը պահուէին տաճարին մէջ կոյսեր, որք հոն կը մնային, մինչեւ հասնելին յարբունս։ Քահանայապետն ու քահանայք կը հսկէին որ այս կոյսերն անբիծ մնան, և ամենեւին մարմնական ո և է արատ չունենան, վասն զի յաւանդութենէ գիտէին թէ Մեսիան՝ Քրիստոսը պիտի ծնի Իսրայէլի ամենէն սուրբ օրիորդէ մը։ Նաև այդ պահծու կոյսերը կը կրթէին Ս. Գրքի վարդապետութիւնները դաս տալով։ Պայման էր որ Քրիստոսածին աղջիկը գիտնայ կարդալ—գրել։ Յովակիմ և Աննա ուրախ եղան որ աղջիկ զաւակ ունեցան, հաւատալով թէ քանի որ հրաշիւք իմն այս զաւակն Աստուած շնորհեց իրենց, ուրեմն այս զաւակէն պիտի ծնի Մեսիան. ուստի սիրայօժար տարին Մարիամն և ընծայեցին տաճարին, երբ էր տակաւին երեք տարեկան։ Այս նշանաւոր դէպքն այսինքն Մարիամ Աստուածածնի յղութեան և ծննդեան ու ընծայման պատմութիւնն ի յաւիտենական յիշատակ պահպանելու համար՝ եկեղեցին դարերէ ի վեր կը կատարէ տօներ, և այս տօներէն մին էր, շաբաթ օրուանը։

Մարիամ Նոր-Կտակարանի մէջ կը փայլի գերագոյն առաքինութեամբ, մինչ զի քահանայ մը, և Զաքարիայի պէս քահանայ մը, երբ հրեշտակէն կը լսէ թէ զաւակ պիտի ունենայ, թերահաւատութեամբ կ'առարկէ թէ այդ բանը կրնա՞յ ըլլալ. քանի որ ինք ծերացած է և կինը պառաւ է, իսկ Մարիամ եւս երբ հրեշտակէն կը լսէ թէ պիտի յղանայ, չվարանիր, անհաւատութեան մեղքը չգործեր, այլ ամենայն խոնարհութեամբ հրեշտակին կը զրուցէ. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում»։

Ահա ինքզինքն աղախին անուանող այս կոյսը պիտի լինէր «Թագուհի երկնից»։ Այս աղջիկն անթիւ բերաններէ պիտի փառաբանուէր, ոչ թէ մէկ կամ երկու դարերու մէջ, այլ յաւիտենապէս։ Ոչ մէկ քնար լռեց, ոչ մէկ սրտի թել չցնցեցաւ ի լուր անուան այս հրաշագեղ բամբիշին։ Հայոց Եկեղեցին ամէն օր և աղօթներու սկիզբն ու վերջ կը յիշէ Աստուածածինն և բարեխօսութիւնը կը հայցէ։ Շարականք, որք մեր գրականութեան գոհարավառ պահարաններն են, կը ներբողեն այս կոյսը։ Իսկ Ցագք և Գանձք յանուն այս Պրչխոյին, անթիւ են, միայն թէ կ'արժէ այս անգամ ալ յիշատակել Նարեկայ Պլպուլին, որ զՄարիամ կ'անուանէ «Եդեմ չքնաղ, ծառ կենացն անմատոյց բոցեղէն սրովք պարունակեալ, ի բարձեալ Հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանգերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդարեալ և սաղաւարեալ»։

Յետոյ Նարեկայ այս Պլպուլն իւր գովասանականը աղերսանօք կը վերածէ կսկծագին գոչելով և պաղատելով. «Բարեխօսեա՛, խնդրեա՛ արտասուօք օգնեա՛ փառնգեցելոյս, գովեալդ ի կանայս, ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնօղդ Աստուծոյ։ Ընդ խնամ թշուառիս հոգին, խորում Բարձրելոյն։

ՆԱՀԱՊԵՏ

ԶՕՆ

ԱՌ ՆՈՐԱՊՍԱԿ ՏԻԿԻՆ Վ. Ֆ....

Օրիորդներ, կուզամ աւետել մի լուր
Որ պիտի առթէ ձեզ խինդ ընդհանուր.
Թռչուն մը այսօր թռաւ ձեր տարմէն,
Հիւրընկալուեցաւ Հայ Տիկնանց զարմէն։
Երէկ դեռ կոչուէր Օրիորդ Կ...եան,
Այս աւուր անունն է Տիկին Ֆ...եան։
Առիւծ մ'էր եկաւ յափշտակել զանի,
Որպէսզի կաղնեաց անտառը տանի,
Վեհանձն ցրաւլիմամբ, խօսքով սիրալիր,
Ծաղկունք սփռելով շուրջը, բոլորալիր.
Բայց դուք, ո՛վ կուսանք, մի՛ զուգէք ցաւիք
Թէ ձեր վանդակէն փախաւ այդ ճայիկ...։
Կը մաղթեմ ձեզ ալ, նըման այն կուսին
Ունենալ օր մը ընտիր ամուսին։

Ո՜վ ազնիւ Տիկնայք, սա միայն կ'ըսեմ,
Այսօր ձեզ համար մեծ օր մ'է վըսեմ,
Զի ձեր մէջ եկաւ այնպիսի մի կին
Որ գիտէ ձայնով յաղթել սոխակին,
Եւ չունիմ կասկած ողջ ըլլար եթէ
Պիտի սքանչանար կաղ երգիչն Թիրթէ։

Մօցարդ, Շոբէն, Լիսթ, Վէրտի, Պէթհովէն,
Նորա մատանց տակ բզմարդ կը թովին
Արդ, Տիկնայք, վըստահ եղէք այդ մասին.
Այս կին պիտ'ըլլայ պարծանք ձեր դասին։

Նորապսակ Տիկնոջս իբրեւ մըտերիմ,
Ամոլիցս շնորհէ, խնդրեմ ո՛վ Տէր իմ,
Կեանք անդորր, անվիշտ, սէր երջանկաւէտ,
Բոյն մի խաղաղիկ յամայր ամս յաւէտ։

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

23 Նոյեմբեր 1892

ՆՈՐԱՎԷՊ

ՀԱՅԿԻԹՆԵՐԸ

«Բացէք պատուհանները եւ պարտէզին դռները. Թող ներս թափանցեն եղբեւանիներու և հովիտներու շուշաններուն անուշ բոյրերը։ Թող իմ աղջիկներս, իրենց թարմ արդուզարդովը թռիչ առնեն այս ծաղկաւէտ ծառերուն ներքեւ, Թող դիմաւորեն արեգակը, ժպտին անոր և ողջունեն զայն իրենց պզտիկ զուարթ ճիչերով»։

Այսպէս կը խօսէր, 1850ի Զատկի կիրակի օրը, ծեր սպայ մը, Լուվսիէնի իր ամարանոցն առանձնացած ուր սովորականին պէս կը ժողվուէին, բոլորովին ընտանեկան ընթրիքի մը շուրջը, իր տղայքն ու բազմաթիւ թոռները։

—Քու ճակատամարտներուդ մէկ պատմութիւնն ըրէ մեզ, հա՛յր։

—Ամենն ալ պատմած եմ ձեզի, սիրելի զաւակներս։ Արդէն գիրքերէն աւելի բան մը կրնա՞մ սորվեցնել ձեզ. ասկէց զատ, ի՞նչ հարկ ձեզ տխրեցնել՝ այսպիսի զուարթ և լուսաշող օրուան մը մէջ՝ պատերազմի սոսկալի պատկերներով։ Ցաւալի բան չէ՞ յիշել թէ Զատկի օրով մարդիկ համարձակած են զիրար սպաննել։

—Իրա՞ւ։

—Այո՛. Պօժէի ճակատամարտը՝ 1421ին, Ռավէնի ճակատամարտը՝ 1512ին եւ Թուլուզինը 1814ին Զատկի օրը տեղի ունեցան։

—Երիտասարդութեանդ վրայ խօսէ մեզ, շատ չիթէ ժամանակ մըն էր ան։

—Ձեզի ըսա՞ծ եմ թէ 1810 Զատկի օրն էր որ ձեր մօր հետ փոխանակեցի սիրոյ առաջին խօսքերը։

—Ո՛չ, հայր։

—Ձեր մօրը հետ, որ այն ատեն բանակին մէջ գինեվաճառ էր։

—Ատիկա ամօթ չենք սեպեր մեզի։

—Հարկաւ, զաւակներս. ա՜յնքան խոնարհմամբ մեծցուցած է ձեզի անիկա... եւ քիչ մըն ալ ինծի, յարեց ծերունին գինուորն որուն աչուըները թրջեցան և ամենուն ակնարկները դարձան պարապ մնացած սպասին ինչպէս նաև թափուր աթոռին վրայ որք, բարեպաշտիկ սովորութեամբ մը, ցոյց կուտային սիրեցեալ մեռեալին տեղը։ Յետոյ բոլոր աչքերը բարձրացան դէպի եռագոյն տակառիկ մը որ խոնաւով կախուած էր չիմնէին վերեւ։ Զինուորական նշխար, որ նախընթաց կիրակի զարդարուած էր տօսախի ճիւղով մը։

—Լէրիտայի պաշարման ատենն էր, 1810 ապրիլ 22 զատկի օրն, ինչպէս ըսի ձեզ, և նախընթաց օրն այն ճակատամարտին զոր շահեցանք Օտոննէլի զօրքերուն վրայ։

Լէրիտա անառիկ քաղաքը, զոր Մեծն Քոնտէ չէր կրցած գրաւել և որ սակայն առնուեցաւ Սիւշէի ռազմիկներէն, շինուած է բլուրի մը կողին վրայ, որուն գագաթը կը բարձրանայ Ճիպրալթարի պէս ամրակուռ դղեակ մը։ Արականեան բերդապահ զօրքն, որ պաշտպանուած էր ի վերուստ տեղացած կրակներովը կը տագնապեցնէր զմեզ, որոցմէ խոյս տալու համար կը կենայինք այն փոսերուն մէջ զորս Սէկրի ջուրերը կը բանային և ճահիճ կը փոխէին։ Այս փոսերէ միոյն մէջ մայր Քարսօ պաշտօնուած էր հաստատել իր փչուն գինետունն, որ հազիւ թէ կը պատսպարուէր տեսակ մը շարժուն ծածկոյթով, մեր վաճառանոցներուն մէջ գտնուած արեւարգելներուն պէս։

Հինգ կամ վեց ընկերներ, ինծի նման տեղակալ, և ջինուապետ մը որուն վրայ պիտի խօսիմ քիչ մը ետքը, կը նստէինք այս ծածկոյթին տակ, Զատիկը տօնելու համար պզտիկ խնճոյք մը ընել ջանալով։

Եթէ զատկական գառնուկը կը պակսէր, անոր փոխարէն, սոխի կեղեւներու հետ տաք ջուրի մէջ նետուած քանի մը գունաւոր հաւկիթներ և Քաթալոնիոյ գինւոյ երկու շիշեր, խոզի ճարպով շինուած ձուածեղով մը կը կազմէին մեր անշուք խնճոյքն որ, մեր գլխուն վերեւ սուլող գնտակներուն տակ՝ բեղշազարական կ'երեւէր մեզ։ Արդէն ամէն ոք տրամադիր էր համադամ կերակրոց պակասը լեցնել այն անփոյթ և անհոգ զուարթութեամբ որով կը համակուէր ֆրանսացին՝ ճակատամարտին առջի օրը։

Մեզ կը ծառայէր գինեվաճառուհին և մանաւանդ իր աղջիկը Օր. Ռէն, — ձեր մայրն — որուն տասն և վեց տարիներն համազգեստին տակ տեսնելն հեշտութիւն կը պատճառէր։

Ամենքս ալ հրապուրուած էինք այս սիրուն ամօթխած աղջիկէն որ, սակայն, նոր Ժան տ'Արք մը պիտի կարծուէր։ Այո, գնդապետէն սկսեալ ցյետին թմբկահարն սիրահարուած էր անոր։ Մարդ մը միայն բնաւ ուշադրութիւն չէր դարձներ անոր վրայ. Կէպրիէր ջինապետը։ Հետեւապէս այս վերջինն հաճելի կ'երեւէր աղջկան։ Մինչ այսպէս կը պատահէր։ Քաղաքավարական ժպիտները՝ մեզի, պերճախօս ակնարկներն՝ անոր։

Կէպրիէր ջինապետը, թէեւ տակաւին երիտասարդ, Պատւոյ Լէգէոնի պատուանշանը կը կրէր։ Այս տարբերութեան կը պարտէր նա մեզ հետ մրցելու առաւելութիւնն, մենք որ սպայներ էինք։ Փորթուկալ արշաւոց բանակին կը վերաբերէր, պատերազմին մէջ վիրաւորուած էր անգլիական գնտակէ մը, և ի վարձատրութիւն իր արիութեան, առած էր այդ խաչը։ Հիւանդանոցէն ելնելէ ետք, իմ գունտիս մէջ մտած էր։ Թէեւ նորեկ, բայց ամենուն սիրելին էր։ «Սիրուն ջինապետը» կը կոչէին զայն, որովհետեւ չափազանց համակրելի տղայ մըն էր, խարտեաշ, անմօրուս, սիրուն և քաղցրաբարոյ։ Ձայնը՝ կնոջական ձայնին թրթռուն փափկութիւնն ունէր։ Կուրծքին վրայի խաչը՝ տարօրինակ և սիրուն հակապատկեր մը կը ձեւացնէր իր պատանիի մանկունակ նկարագրին հետ։

—Ազնիւ բարեկամներս, ըսի ընկերներուս, վաղը պիտի կռուինք, ճակատամարտի իրիկունը, կոչման պահուն, մենէ մէկը պիտի պակսի, գուցէ ամենքս ալ։ Լաւ ուրեմն, կուզեմ այս ընդհանուր անստուգութենէն օգտուիլ, աղաչելով օր. Ռէնին որ բարեհաճի ցոյց տալ մեր մէջէն ամենէն աւելի սիրած անձը։ Միւսները խօսք պիտի տան այս բանին համար անոր դէմ ոխ չի պահել։ Աղջիկը չկրնար ամենն ալ սիրել։

—Ընդհակառակն, յարեց սիրուն աղջիկը, ձեզ ամենդ ալ կը սիրեմ, տեղակալներս։

—Անկարելի է։

—Այն ատեն, սպայներս, ըսաւ մայր Քարսօ, վիճակ ձգեցէք որ ետքէն նախանձութիւն չի ծագի։

—Վիճա՛կ ձգե՛լ, ի՞նչով, ի՞նչպէս։ Ցեսնապետն ըսաւ ինծի։

—Եթէ տեղակալս ներէ, գաղափար մը պիտի յայտնեմ իրեն։

—Տեսնենք ի՞նչ է այդ գաղափարը։

—Գինետան բոլոր հաւկիթները կարմիր չեն, հաչակաւոր խոզի ճարպով շինուելիք ձուածեղին հաւկիթներն ալ անոնց մէջ են։ Թող մայր Քարսօ մէկ ծայրէն թեթեւապէս կոտրէ զայնս, այնպէս որ կճեպները գըրեթէ ամբողջ մնան։

(Մնացեալը վաղուան թիւով)

ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Անցեալի ուրբաթ աւուր թուով առաջարկուած հանելուկին լուծումը ղրկած են մեզ հարիւր տասը անձինք, որոց 60ը արական 31ը իգական սեռէ, և 5ը վարժարանաց աշակերտներու կողմէ. 14 նամակներու ներքեւ անուանց սկզբնատառեր միայն կան։ Այս հարիւր տասն անձանց մեծագոյն մասը գտած են հանելուկին ճիշդ լուծումը, եւ ասոնց մէջ առաջնութիւն ունեցած է Պ. Խաչիկ Կ. Խաչատուրեան, աշակերտ Պէրպէրեան վարժարանի, որ հետեւաբար կը ստանայ Լէյ-Շէփ կոչեալ խոստացեալ նուէրը, գեղեցիկ փողկապ մը։

Հանելուկն էր, ինչպէս կը յիշուի, հետեւեալը.

Երկու զոյգ մայր և աղջիկ երեք ոսկի կը գտնեն զոր իրենց մէջ բաժնելով իւրաքանչիւրը մէկ մէկ ոսկի կառնէ. այս հաւասարապէս բաժանումը ի՞նչպէս ըրած են։

ԼՈՒԾՈՒՄ.—Երկու զոյգ մայրերն են կին մը և իր աղջիկը. այս վերջինը ունի նաեւ իր աղջիկը, որով երեքը կ'ըլլան երկու մայր և երկու աղջիկ ու հաւասարապէս կրնան բաժնել երեք ոսկին։

Ստորեւ կը հրատարակենք վեց զանազան լուծումներ որք ճիշդ չըլլալով հանդերձ և գուցէ այդ պատճառաւ իսկ բաւական հետաքրքրական կրնան թուիլ մեր ընթերցողաց։

Ենթադրենք որ զոյգ մը կանանց տարիքն իրարու հաւասար ըլլալով իւրաքանչիւրին տարիքն լինի 36, իսկ զոյգ մը աղջկանց տարիքն ալ 18 ական էն հաւասարելով զոյգ մը կանանց տարիքներէն միոյն, իւրաքանչիւրը թէպէտ չորս անձնաւորութիւն բայց կ'ունենան 36 ական հաւասար տարիք որով գտած 3 ոսկին հաւասարապէս իրենց մէջ կրնան բաժանել հետեւեալ կերպով

1	կին	36	տարեկան	1 ոսկի
1	»	36	»	1 »
2	աղջիկ	36	»	1 »

Պ. [illegible]

* * *

Երեք քոյր են նոքա, որոցմէ երկուքն երկուորեակ մայր եղած, և միւսն աղջիկ, գտնուած երեք ոսկին բաժնեցին հաւասարապէս մէկմէկ ոսկի առնելով.

Նուարդ [illegible]

* * *

Մայր և աղջիկ, երկու զոյգ երեք (12) ոսկի գտան։ Ց. Ղ.

Գ[illegible]

* * *

Իւրաքանչիւրն երեք բաժին մէկ մէկ դրերն առնելով։

Գ[illegible]

* * *

Մայր մը որ երկու աղջիկ ունի, առաջին աղջկան հետ շրջագայած ժամանակ, երկու ոսկի կը գտնեն, միեւնոյն օրը՝ միեւնոյն մայրը՝ իւր երկրորդ աղջկան հետ շրջագայած միջոցին, մէկ ոսկի եւս կը գտնեն որով երկու զոյգ մայր ու աղջիկ երեք ոսկի գտած կ'ըլլան, զորս կը բաժնեն հաւասարապէս։

Աղա Մ[illegible]

Սոյն անձը ճիշդ լուծումն ալ գտած էր։

* * *

Երկու զոյգ մայր ու աղջիկ, չորս անձինք, կը գտնեն 1 հատ 2½ ոսկինոց, 1 հատ 1 ոսկինոց, 1 հատ ½ ոսկինոց, որոց գումարն է չորս ոսկի և կը բաժնեն մէջերնին հաւասարապէս մէկ մէկ ոսկի առնելով։

Ս[illegible] Դ.

Վերջին պահուն Գրիգոր էֆ. Զօհրապ բերանացի կերպով մեզ կը հաղորդէ հետեւեալ լուծումն որ գտնուածներուն ամենէն նրբամիտ ու սիրունն է, և ճիշդը միանգամայն։

«Տիկին Արաքսի Եազըճեան իւր աղջիկն ու թոռը գտած են հանելուկին լուծումը»։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Քարոզիչը իր սպասուհւոյն.—Մարիամ, երէկ իրիկուն մարդ մը կար խոհանոցը, ո՞վ էր։

Մարիամ.—Եղբայրս էր։

Քարոզիչը.—Բայց ըսած ես ինծ թէ եղբայր չունիս։

Մարիամ.—Ես ալ այնպէս գիտէի, բայց երէկուան քարոզնուդ մէջ ըսիք թէ ամենքս ալ եղբայր ենք։

* * *

Ա.—Օր. Արաքսիի ամուսնութիւն առաջարկած ատենդ ծունկի եկա՞ր աղէ՞կ։

Բ.—Ոչ, չէի կրնար. զի ծունկիս վրայ նստած էր։

* * *

Հիւանդը (ձեռքովը գլուխը բռնելով).—Տեսէ՛ք, Տօքթօր, գլուխս...

Բժիշկը.—Հոգ մ'ըներ, բան չկայ մէջը։

* * *

Գիւղացին.—Այս ձին շատ կը դիմանա՞յ։

Ձին ծախողը.—Այո՛, մէկ ժամուան մէջ 20 մղոն կ'երթայ առանց կենալու։

Գիւղացին.—Ուրեմն գործիս չգար, գիւղէս մինչեւ քաղաքը միմիայն 12 մղոն է։

* * *

Գիւղացի մը (ձեռքը գտնուած թատերական ազդ մը կարդալով).—«Առաջին նստարանք 20 ղրշ. երկրորդ 10 ղրշ. վերնայարկ 5 ղրշ.—բռօկրամ՝ 20 փրյ» — Հօ՛, հօ՛, ուրեմն բռօկրամը կը նստինք ամենէն կէկ մը։

* * *

Կախարդ մը գիւղի մը փողոցին մէջ կեցած կը պոռար.—Հրամմեցէ՛ք, Տիկնայք եւ Պարոնայք, մի միայն 2 բէնիի համար ձեր գաղտնիքը, անցեալը և ներկայն կը պարզեմ ձեզ, ձեր ներսիդին ինչ որ կայ կը տեսնեմ ու կը գուշակեմ։

Գիւղացի մը.—Ե՛կ ըսէ նայինք իմ գաղտնիքս և մէջս։

Կախարդը քառորդ ժամ մը պարապ խօսքեր նետելէ վերջ կը խնդրէ գիւղացիէն որ 2 բէնին վճարէ։

Գիւղացին.—Հօ՛, հօ՛, դուն չըսի՞ր որ իմ մէջս գիտես, ուրեմն պէտք էիր գիտնալ թէ գրպանս ստակ մը չկար։

ՊԵՏԻԿ

ՏՕՔԹՕՐ
Պ. Ց. ՊԻԼԶԻՔՃԵԱՆ

Այս անգամ Իւսկիւտար Իհատիէ Սաաթճի Սեղմոս փողոց թիւ 9 տունն փոխադրուած ըլլալով՝ հիւանդ կ'ընդունի ամեն օր եւ կը դարմանէ ամեն տեսակ արտաքին եւ ներքին հիւանդութիւններ, մասնաւորապէս սրտի, թոքի, ստամոքսի եւ կանանց ծննդաբերական գործարանաց եւ ջղային հիւանդութիւններն։

Երեքշաբթի եւ շաբաթ օրերն առաւօտէ մինչեւ կէս օր ձրիաբար կը դարմանէ իրեն դիմող հիւանդներն, նաեւ կը գտնուի կիրակի առաւօտ Սէլամիէ Չէօմլէքճիան եւ երկուշաբթի օրն ա կէս օրէ վերջը Պոլիս Գում-Գաբու Ստասիոն ճատտէ Ա. Ջալիփեանի դեղարաններն։

320 9—12

ՆՈՐ ԳՐԵԱՆՔ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ռոլան գրատունն ի Փարիզ, Լաֆայէթ փողոց, թիւ 123, սկսած է հրատարակել կիրառական բժշկութեան յատուկ բառարան մը (Dictionnaire Spécial de médecine usuelle) ի գործածութիւն բարձր դասու ընտանեաց, կրօնական միաբանութեանց, գիշերօթիկ դպրոցաց տեսուչներու և տեսուչհիներու, արուեստաւորներու, և ամեն անոնց որք կզբաղին հիւանդներու դարմանումով, հեղինակութեամբ Տոքթ. Ժ. Պարթէզի։

Այս կարեւոր գործ, երկու սիւնակներու վրայ տպուած, մեծադիր ֆորմաով, հասարակ 20 հատորներէ աւելի նիւթ կը պարունակէ։ Գիրքին մէջ կան երեսուն պատկերներ, և գիրքէն դուրս 30է չափ ջրաներկ պատկերներ կան, կիսաթավ Տաուի ձեռամբ գծուած։

Այս բառարան կը պարունակէ. 1. Տեղական և ընդհանուր, սրընթաց և յամրընթաց ամեն հիւանդութիւններու ճիշդ ցուցակը, նշանակուած են նաեւ այն նշաններ որոնցմէ կարելի է ճանչնալ զայնս, և առողջապահական ու բժշկական դարմանումը զոր անոնք կը պահանջեն. 2. Ցուցակն հին ու նոր բոլոր դեղերու որք կըրնան գործածուիլ ըստ պարագային. 3. Բուսական և հանքային բոլոր թոյներու անուանքն և բժշկին հասնելէն առաջ տըրուելիք թեղթափը. 4. Շնչահեղձներու, վիրաւորեալներու և խղդուողներու հասցուելիք օգնութեանց վերաբերեալ ընդարձակ խրատներ. 5. Ընդհանուր նկարագրութիւնն բոլոր բժշկական տնկոց՝ զայնս մըտածելու եղանակով հանդերձ. 6. Ցուցակ մը սննդական նիւթոց խարդախութիւններուն և ապականութեանց զայնս ճանչնալու միջոցով հանդերձ։ 45

ՄՈՍ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Թիֆլիս» շոգենաւը գալ ի ամսոյս 26ին աստ կը սպասուի ընդհանուր վաճառքով։

ՆՈՐ
ՕՐԱՑՈՅՑ
1893
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
14. Սուլթան Համամ հասէքի 14.

Սոյն Օրացոյցն որ հրատարակուած է Հասարակաց Կրթութեան Նախարարութեան հրամանաւ եւ բաղդատմամբ ուրիշ տարիներու ճոխագոյն է, կը պարունակէ իւր մէջ, ի դիւրութիւն եկեղեցական երգեցողութեան, ոչ միայն ամեն օրուան Աւագ Օրհնութիւններն, Հարցերն, Մեծացուցէներն, Մանկունքներն ու Համբարձիններն, այլեւ Նախատօնակներն ու Թափօրներն, դիւրատար եւ ճշգրիտ ըստ կարգաւորութեան Տօնացուցի։

Որպէսզի Օրացոյցն առ հասարակ ամէն կարգի ազգայնոց օգտակար հանդիսանայ, ճոխացեալ է Վիճակագրական այլ եւ այլ կարեւոր ծանօթութեամբք, ինչպէս՝ Օսմանեան Կայսրութիւն, Աւագանի Կայսերական պալատան, Նախարարք Բ. Դրան, Մեծ Պաշտօնատարք Մայրաքաղաքիս, Կուսակալք Նահանգաց եւն. Օսմանեան Դեսպանք եւ Նուիրակք յօտար երկիրս, Դեսպանք եւ Հիւպատոսք օտար Տէրութեանց ի Կ. Պոլիս եւն. Հայազգի Աստիճանաւորք եւ Պաշտօնեայք Օսմ. Տէրութեան, Հայրապետութիւն Հայոց, Ազգ. Կեդրոնական Վարչութիւն, Տեսուչ Խորհուրդք եւն. Պատրիարքութիւնք եւ Կաթողիկոսութիւնք, Առաջնորդութիւնք ի Թուրքիա, Հռովմէական եւ Բողոքական Հայ հասարակութիւնք, Ժամանակագրութիւնք երեւելի անցից, եւն. եւն.

ԳԻՆ 40 ՓՐՑ.

ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Թիւ 4, Փիչինի-Աղալար Էֆէնտի խան. Մարբուչերլար, Ստամպուլ թիւ 4։ Ամեն օր ժամը 7 էն 12, բացի ուրբ. եւ տօն օրերէ։

Սոյն գրասենեակի տնօրինութիւնն ընծեռած է այն ամեն կանխահոգ միջոցներն եւ ձեռնհաս անձանց աջակցութիւնն, որոց օժանդակութեամբ

ԿԸ ԽՄԲԱԳՐԷ օսմ. հայ. յուն. գաղ. անգղ. գերմ. ռուս. իտալ. սպան. եփրայեց. եւ պուլղ. լեզուօք դատական, առեւտրական եւ այլ ամեն կարգի եւ տեսակի գրութիւններ, ինչպէս են. աղերսագիր, լահիա, բրօթէսթօ, ծանուցագիր, մուրհակ, յօդուած եւլն։

ԿԸ ԹԱՐԳՄԱՆԷ յիշեալ լեզուօք խմբագրեալ ամեն կարգի եւ տեսակի գրութիւններ, որ լեզուի որ կը պահանջուի։

ԿԸ ԿԱՐԳԱԴՐԷ շփոթ եւ կնճռալից հաշիւներ. տոմարակալութեանդրութեան կը վերածէ անկարգ տումարներ. այցելու պաշտօնէի հանգամանօք կ'ստանձնէ գրասենեակաց հաշուական գործեր։

Գաղտնապահութիւն, ճշդապահութիւն, ուղղամտութիւն երաշխաւորեալ։ 27 25—60

Փարիզի բոլոր վայելչասէր տիկնայք կը գործածեն Ցիաֆանը, Սառա Պէռնար Փուտրան, և Ցիաֆան հոտաւէտինաց վաճառատան միւս բոլոր արտադրութիւնները։

[illegible] ՁԿԱՆ ԻՒՂ

Կ. Պոլիս, 3 Դեկտ. 1888

Պարոնայք Աճէդ և Պօռէն,

Կը ցաւիմ որ պաշտօնական գիրքերս կարող չեմ փորձել ընել, այլ համաձայն [illegible] բժիշկներու փորձերուն և այն բժիշկը որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ, կը յայտարարեն որ ձեր [illegible] ձկան իւղն, երբ այդ վիճակին մէջ դիւրաւ խմուելով և մարսուելով, կը համապատասխանէ այն յատկութեանց զորս [illegible] ի վաղուց անոր հաչակած է, մասնաւորապէս այդ յաջող պատրաստութեան մէջ։

ՏՐ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վեհ. Սուլթանին

ԻԼԱՆ

Միսաք օղլու միւթէվէֆֆա Վէրթանէս աղանըն Մալիյէ Խազինէի ճէլիլէսինէ պա իլամը մահքիւմունպիհ տէյնի պօրճունտան մալիւմ էլ մըգտար մէպլաղը մալիւմէնին թէէտիէսի իչիւն միւթէվէֆֆայի մէրգումուն Գարթալ գասապասընտա չըմէնտօրֆէր խաթթը իւզէրինտէ Սկիւտար ճատտէսինտէ 25 նօմէրօլու 1 պապ տիւքքեան արսասը իլէ մահալլը մէզքիւրտէ 27 վէ 29 վէ 31 նօմէրօլար իլէ մէրգում տիւքքեան վէ խան արսասը իլէ ճէման 4 գըթա արսանըն [illegible] Օսմանի 100 ղրուշ հիսսէ իլէ 3969 ղրուշ պէտէլ [illegible] 31 կիւնէ գատար 100 տէ 5 զամմ իլէ մէզքիւր [illegible] Գարթալ [illegible] իլան օլունուր։ 348

11 Թէշրինի սանի 308

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Հիճազ Փէրգասընա կէօնտէրիլմէք իւզրէ միւպայեա օլունաճագ [illegible] 251.000 գըթէ [illegible] 40 փարատա [illegible] Թէշրինի սանիի Բումինին 23 իւնճիւ բազար իրթէսի կիւնիւ սաաթ 10 պուչուգտա գատար 100 տէ 5 թէնզիլի գապուլ օլունաճաղընտան, [illegible] Սէրասքէրի [illegible] էյլէմէլէրի. Նօ. 39

Տալիբլէրի [illegible] Թէշրինի սանիի [illegible] Սէրասքէրի [illegible]
Նօ. 40 1—3

ԼԻՒՆԻՕՆ L'UNION

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

Հաստատեալ ի Փարիզ, իւր կեդրոնավայրն, Պանք փողոց, 15

ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ
ՀԻՄՆԵԱԼ 1828ԻՆ

Դրամագլուխը	Ֆր. 10.000.000
Պահեստի դրամ	» 6.700.000
Գանձերի ապահովագին (Բոնդ)	» 63.770.000
1890ի հասոյթք	» 15.000.000
Հրդեհի վնասուց վճարուած	» 160.570.000

Պ. Պ.
Ա. Տ'ԷՑՇԹԱՆ, [illegible] երեսփոխան, Նախկին վարիչ Ֆրանսական Պանքայի, Նախագահ Ֆրանսայի Հարաւային երկաթուղեաց ընկերութեան, ՆԱԽԱԳԱՀ
Ս. ՄԱԼԷ, Մալէ եղբարց Դրամատունէն, Նախագահ «Բարի-Լիոն-Մէտիթերրանէ» իր կաթուղեաց ընկերութեան, Նախագահ Օսմ. կայս. Պանքայի, ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀ ԻՒՆԻՕՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.
Թ. ՕՏԼՈՒ, Նախկին գրամատէր, Նախագահ Վիէյլ Մոնթանեյի և Լըինայի անխափանաց ընկերութեան.
Ս. ՀԻՒՐՍԷԼ, Նախագահ Մէլիւզինի Ծովային Ապահովագրական ընկերութեան.

Պ. Պ.
Ս. ՃԷՅՄՍԸՆ, Հօթինկէր և Ընկ. դրամատանց տանէն.
Ֆ. ՄԻՇՕ, Նախկին Նախագահ Սէնի Առեւտրական Դատարանին, վարիչ Ֆրանսական Պանքայի, վարիչ Ֆանսայի Հիւսիսային երկաթուղիոյն.
Հ. ՄԻՐԱԲՕ, Միրաբօ Բաքար, Բիւբարի և Ընկ. դրամատանց տանէն.
Ա. ԹԻՒՐՆԷՅՍԸՆ, Լանտի երկաթուղեաց Ընկերութեան վարիչ.
Ա. ՎԼԷՐՆ, Վլէրն և Ընկ. դրամատանց տանէն, վարիչ Ֆրանսական պանքայի, տեղակալ Ֆանսայի Հիւսիսային երկաթուղեաց ընկերութեան, վարիչ Օսմ. պանքային.

ՀՐԴԵՀԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ) Պ. Պ. ՇԱՌԼԸ ՌՕՊԷՐ. Նախկին պետական խորհրդական, ՏՆՕՐԷՆ
Պօլ Ժ. ՍԸՌԻՋ, Նախկին ելմտական քննիչ, ՓՈԽ-ՏՆՕՐԷՆ

ԿԵՆԱՑ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ) Պ. Պ. ԱԼՊԷՐ ՖՈՌ, Տնօրէն
ԷՕԺԷՆ ԼԸ ՍԷՆ, Փոխ-Տնօրէն

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ
ՀԻՄՆԵԱԼ 1829ԻՆ

Դրամագլուխը	Ֆր. 10.000.000
Պահեստի դրամ.	» 93.8
Կենաց համար վճարուած	» 59.000.000
Ապահովագրեալ գումարը	» 243.580.000

33

Ընկերութեան դրամատեարք ի Կ. Պոլիս. ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ.

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Մասնաւոր Տնօրէնն Կ. Պոլսոյ, ՍԻՄՈՆ ՔԱՅՍԷՐԼԵԱՆ, Կալաթա, Մահմուտիէ փողոց, Քամանտօ Պանգայի դիմաց, Երամեան խան, Թիւ 2

THE ECONOMICON · ΤΕΙΟΝ ΕΙΚΟΝΟΜΙΚΟΝ · ԹԷՅ ԷԻՔՕՆՕՄԻՔՕՆ
MARQUE DEPOSÉE

Ամեն անոնք, որք կ'ուզեն Ճավայի և Ջինու ճշմարիտ թէյ խմել, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Ճէլալ պէյ խանի կից Թիւ 10 ՍԱՎՐՈՒՍԵԱՆ և ԽՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր թէ՛ տեսակի ազնուութեան, թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և թէ՛ գիներու աժանութեան կողմանէ անհամեմատելի են։

Ցիշեալ վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյավաճառաց քով կը գտնուին ի վերեւ դրուած մարքայով, որու կեղծերը ելած ըլլալով պէտք է զգուշանալ։

342 4—50

PARIS



GRANDS MAGASINS DU

Printemps

NOUVEAUTÉS

Envoi gratis et franco

du catalogue général illustré, renfermant toutes les modes nouvelles pour la **SAISON D'HIVER**, sur demande affranchie adressée à

MM. JULES JALUZOT & Cie
PARIS

Sont également envoyés franco, les échantillons de tous les tissus composant nos immenses assortiments, mais bien spécifier les genres et prix.

Envoi franco de port jusqu'à destination de toute commande de 50 francs payée par avance, pouvant être expédiée en **un seul** colis-postal.

Les envois qui ne peuvent être faits par colis postaux, sont expédiés franco Marseille ou, sur demande, ***franco destination***, à partir de 100 fr. moyennant 5 % d'augmentation sur le montant de la facture. — Ces envois peuvent être expédiés contre remboursement.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՀԱՏԵՂԻ ՆԱՐԱՍԵԱՑ
ՀԻՄՆԵԱԼ
ԷՕԺԷՆ ՍԱԲԱՐՈՐ ՊԷՑԻ ԿՈՂՄԷ

Բերա, Սարքզ Աղաճ փողոց Թիւ 21, Լիւքսէնպուրկի բաղանեաց մօտ
Կալաթա, Վօյվոտա փողոց, Կիւմիւշլիւ խան, Ֆրանսական Նամակատան դիմը

[illegible]

- Եթէ ունիք իրեր մը ունիք վաճառելու հանրային աճուրդով կամ սակարկութեամբ.
- Եթէ կուզէք օգտուիլ լաւ առիթներէ.
- Եթէ պէտք ունիք ծախու նիւթերու վրայ կանխավճարներու.
- Եթէ կուզէք ամենայն ապահովութեամբ աւանդել կարասիներ, արդուներ, ծրարներ, դաշնակներ, պատկերներ, կառքեր, արծաթեղէնք եւ ապրանքներ.
- Եթէ ունիք ծրարումներ, առաքումներ, մաքսէ հանելիք ապրանքներ.
- Եթէ կուզէք ծախել կամ գնել անշարժ կալուածներ.
- Եթէ կուզէք վարձու տալ ձեր տուները կամ յարկերը.
- Եթէ կուզէք տուներ կամ յարկեր վարձել.
- Եթէ կուզէք օգտակարապէս մատակարարել ձեր անշարժ կալուածները.
- Եթէ կուզէք ապահովագրել ձեր շարժուն և անշարժ կալուածները լաւ պայմաններով.
- Դիմեցէ՛ք վերոյիշեալ վաճառատունն

Ծանօթ. — Վաճառատան կանոնագիրը հասարակութեան տրամադրութեան տակն է։ 227

[illegible]

ԼԱՆՔԱՇԱՅՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ի ՄԱՆՉԷՍԹԸՐ

Հիմնեալ 1852 ին

Դրամագլուխ	Անգլ. Ոս.	3,000,000
31 դկ. 31ին աւանդ տրուած գ. մ.		1,771,006
1891 դեկ. 31ին պահեստ		1,635,903
Հասոյթ 1891 ին		1,851,329

Այս ընկերութիւնը ընդդէմ հրդեհի կապահովէ ամեն տեսակ շէնք, կահ, ապրանք, ի Պոլիս և ի շրջակայս ինչպէս և Նաւերնաւահանգստինէ։

THE LANCASHIRE INSURANCE COMPANY

Վնասի ատեն առաջ և խղճամիտ վճարում։

Տեղեկութեանց համար դիմել առ գործակալութիւնն ընկերութեան, 1 և 2 Իզզէթ փաշա խան, Ղալաթիա

ՐԻՉԱՐՏ Մ. ՊՈՆՏ
Ներկայացուցիչ
257 ՊՈՆՏ, ՍԻԼԼԸՐ ԵՒԸՆԿ.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԵԾ ԵՒ ՓՈՐՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԱՑՈՒՄՆ Ա. ՀԱԱՍ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՏԵՂՒՈՅՆ
որ ի Ղալաթիա, փողոց Վօյվօտա, Նորատունկեան խան, Թիւ 6, 7 և 8
Ի 1/13 Նոյեմբերի 1892

Զանազան և նոր բեզերք, կանանց գլխու ծածկոցք, Սեղանի ծածկոց և անձեռոցներ, ծերմակեղէնք, Սրփիչ, Թաշկինակ, անկողնոյ ծածկոց, Քօրսէ, կանանց շապիկներ, գիշերազգեստներ, և այլ տեսակ կանանց վերաբերեալ իրեղէններ. Անուշահոտ նիւթեր և այլն և այլն.

Կը խնդրենք արգոյ հասարակութենէն այցել մեր վաճառատունն ուր հետեւեալները կը վաճառուին աժան գիներով և յոյժ նպաստաւոր պայմաններով։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԻՆ 306

ՀՌՉԱԿԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՏԻՖԱՆԻ
Լ. ՄԱԶԻՐՈՒԷԼ ԵՒ ԸՆԿ.
ՓԱՐԻԶ — 32, Օբերայի ճամբային, 32 — ՓԱՐԻԶ
ՀՌՉԱԿԱՒՈՐ ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹՔ

ՏԻՖԱՆԻ

ՓՈՒՏՐ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԷՆԱՐ



Ռուսական Օ տը Քոլոնեը	Ռէժանի անուշահոտութիւնք
Ա լա Բօ Տ'Էսբանեի Ջուր	Սառա Պէնար
Ֆէտորա անուշահոտութիւնք	Տիֆանի կաթ Իրիսի

Աճառք, Էքսթռէ, արդուզարդի Ջուր, եայլն

Կը վաճառուին հոտեղինաց ամեն աղէկ վաճառատանց մէջ։

ՌՕԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՐԱՆՍ ՔՕՌՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՐԱ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4.000.000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է » 35.000.000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ԶԵՂՉԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
140 Պահչէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան.

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՐՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամեն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժուարանալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով մեր խնայածստակներն յումպէտս կը վատնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր յարաբերութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի Էնթէրնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ տասը եւն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք հաւասար դրամագլուխ մը։

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆՔ 39

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Միրքէնի, հանրային պարտուց պաշտօնատան դիմաց, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՕՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ.

NORTH BRITISH RUBBER Co · TRADE MARK · EDINBURGH

ՔԱՌՉՈՒԿԷ ՄՈՒՃԱԿ
(ԼԱՍԹԻՔ)
(ԵՒ ՄԱՆԹՕ ՄՈՒՇԱՄՊԱ)

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՆՈՐԹԷ ՊՐԻԹԻՇ ՌԱՊԸՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

NORTH BRITISH RUBBER Co · EDINBURGH

Մայրաքաղաքիս մէջ երկար ատենէ ի վեր ճանչցուած է, թէ մեր քառչուկէ մուճակները կը գերազանցեն հրապարակիս վրայ գտնուածները թէ՛ իրենց ճոխութեամբ և թէ հաստատուն զօտի կոշտաբերքէ շինուածքով։

Այս անգամ մեր յաճախորդաց փափագանաց համեմատ ընտիր բրդենէն կերպասէ եւ զօտի կոշտաբերքէ շինուած խիստ ձեւաւոր և դիմացկուն մանթօ բերել տուած ենք։

Ինչպէս գործարանիս մուճակները նոյնպէս մանթօները ուրիշ գործարաններու շինուածին 2-3ը կը հինցունէ եւ մէջը բնաւ ջուր չառներ։

Մեր մուճակներուն ներսի կողմը, կճիռ մը եւ զօտին կողմը առիւծի պատկերը դրոշմուած է, եւ կը վաճառուին բոլոր քառչուկէ մուճակ ծախողներու քով։ Իսկ մանթօները օծիքին ներսի կողմը կը գտնուի առիւծի եւ կշիռի նշանները, և կը ծախուի ի կեդրոնատեղին, ինչպէս նաեւ ի Զմիւռնիա Արասթա շուկան, Հաճեմյասե Բիֆաթ Էֆ.ի քով և ի Բէլանիկ պէղէսթէն Շուկան գաֆաֆ Ռէճէպ Պէմիշ Օղլուի քով։ Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Պահչէ Գաբու Գէֆէճեան օղլու խան դրան կից Թիւ 1 մթեանցը։
226

Royal Windsor

ՀՌՉԱԿԱՒՈՐ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ ՄԱԶԵՐՈՒ

Սպիտակ մազեր ունի՞ք, մազերնիդ կը թափի՞ն, մազերու արմատները թուլցա՞ծ են կամ կը թափի՞ն. Եթէ ունիք այդ տեսակ բաներ գործածեցէ՛ք Ռօայէլ Վինտզօրի դեղը, որովհետեւ այս դեղ երիտասարդութեան ատենին պէս, բնական գոյն մը ու գեղեցկութիւն մը կ'ուտայ սպիտակ մազերուն և կ'արգիլէ մազերու թափիլն եայլն։ Այս դեղ, որուն տեղը չգտնուի արժանացած է. մազերու միակ վերանորոգիչն է։ Անյուսալի արդիւնքներ առաջ բերելով, վաճառումն օրէ օր աւելնալու վրայ է։ Փափաքողաց պիտի զրկուի մանրամասնութիւններ ու վկայութիւններ պարունակող ծանուցումն առանց որ և է ծախքի։ Այս դեղ կը վաճառուի գլխաւորաբար վարսավիրաներու և դեղագործներու քով։

Վիէժինիի վարդի սպեղանին երեսի գոյնը կը գեղեցկացնէ։ Այս եւս կը ծախուի Ռօայէլ Վինտզօրի ծախուած տեղերը։

EMULSION SCOTT

(ՍԳՈՏԴԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ՁՈՒԹ ԻՒՂ

Խմելու հեշտ ու շատ ու ազդու

Պատրաստեալ Մեսսրս ՍԳՈՏԴԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եորք։

Կաթի չափ ախորժահամ է

Մորթու ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիբօֆոսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ծռազածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է. անուշ համ ու հոտ ունի. դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով

Ցորդ ակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՆՏԸՐ ԵՒ ՀԻՐՍՏ

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

Պատիւ ունի ազդարարել արգոյ հասարակութեան թէ՛ յետ այսորիկ յանձն կ'առնու ամեն վերաւեալ այլեւայլ տպագրական գործեր, մաքուր միանգամայն չափաւոր գիներով, որպէս պաշարանի վրայ հասցէներ, նամակագլուխք, վաճառականական նամակներ, հարսանեաց հրաւիրագիրք, մահազդք եւն եւն. մասնաւորաբար վայրկենական այցաքարտք։ Գաւառներէ եկած յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ։

Փափաքողք պէտք է դիմեն առ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ
Ի Նորատունկեան խան, Ղալաթիա Կ. Պոլսոյ

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻ

Տօքթօր Ախէրի ջերմային հիւանդութեան, այսինքն որ անխափան բաղադրութիւն մի է զաւրաւորեցինը, է գտանուած ազդու կազդուրիչ ամեն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու, ջերմոտ կլիմայն կամ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնն և ապաքինիչ ազդու յատկութիւնն երաշխաւորեալ է Նորա անհամար արդիւնքը ազդու գիտուն ամեն. Այս Ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անկարելի նիւթոց միջոցաւ, որ թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, եւ խանգարելն յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և այլն, և արեան թունաւորումն որոց առ անուանել գրուած է ջերմն և տենդը, խաղաղ ջերմ պարբերական ջերմն, ընդհանուր ջերմ, մալարիա տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պաշտպանուելու հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտն ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ, կամ ճախճախուտ վայրերէ մահահոտ նիւթով, կամ բաց ողողանքներէ և այլաներու ծակոտիներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Ախէրի ջերմի ու տենդից դեղը կը ճգէ այս ամենայն նիւթոց կամ և ուրիշ ազդեցութիւնը, զօրութ կը գտնէ զայն մարմնոյն մէջէն, որոյ դարմանաւ ամբողջութիւնն ստուգապէս անվնաս և անփոփոխ է և օգտակար ազդու, միայն թէ տրուած հրահանգի համեմատ գործածուի. կը ծախուի Միացեալ և Լոնտոնի Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կ. Պոլսոյ։ 39

ՊՈՄՈՆԴԻ ԳԱՐԵՋՈՒՐ

Տէօպլէր. Վիեննա, Միւնիխ և Բիլզէն

Կը գտնուի մայրաքաղաքիս լաւագոյն ճաշարաններու և գարեջրատուններու մէջ։

ԳԱՐԵՋՈՒՐ ՏԱԿԱՌՈՎ ԵՒ ՇԻՇՈՎ

Գիներու, պայմաններու և յանձնարարութիւններու համար դիմել Գործարանն, որ կը գտնուի ի Ֆէրիքէօյ, Ֆուռուն փողոց կամ ի մթերանոցն, Ղալաթիա, Պ. Ֆրոյլիխի սենեակն, Գրնաճեան խան, Թիւ 4, Մերթեզանի փողոց, Թիւնէլի մօտ եւ ի Բերա, Պաղար Անկլէի մառանները, Բերա, Մեծ Փողոց, Թիւ 209

146 23—28

ԱՆՈՒՇԻ ՈՒ ՕՇԱՐԱԿԻ ՍՊԱՍՆԵՐ
ԱՆՈՒՇԻ ՍԿԱՀԱԿՆԵՐ, ԴԳԱԼՆԵՐ ՈՒ ՍԿՈՒՏԵՂՆԵՐ

ԴԵՂԱԿԵՐՏ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ



Վերոյգրեալ նիւթերն, արդիւնք առ Նացի հայ արհեստաւորաց ճարտարարուեստին արծաթազօծեալ են հարիւր դրամ արծաթով ու Նուրբ ճաշակաւ մը պատրաստուած և բուն իսկ արծաթեայ նաօթներէն բնաւ տարբերութիւն չունին։ Փափաքողք կրնան դիմել ի Պոլիս Մեծ Շուկայ Վարագճը խան, վարի յարկ, Թիւ 2, Ցովսէփ Թօխեանի սենեակը։

SANTAL DE MIDY

ԴԵՂԱԳՈՐԾ Ի ՓԱՐԻԶ

Պէտք չի Թովուր Քոպայի, Քիւպէպի, կաղզուրիչ հեղուկներու։ Կը բժշկէ 48 ժամուան մէջ տարափոխիկ հիւանդութիւնները. — Մեն մի գեղահատ կը կրէ յոյն անունը սեւ տառերով։

MIDY

Փարիզ, 8, Վիվիէն փողոց, 8.

COMPie RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան մեկնումներ

Եշ. 23.5 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի.
Եշ. 24.6 Աղեքսանդրիոյ աղղայկի սուրհանդակ, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէոսի ճամբով.
Եշ. 25.7 Սեբաստոպոլի սուրհանդակ, [illegible]
Եշ. 25/7 սուրհանդակ գէպի Փոքր Ասիոյ նաւահանգիստները մինչեւ [illegible]
6/8 [illegible] սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի.

[illegible] 2 6. երեքշաբթի օրը կ'երթայ դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ու, [illegible] Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Եւբէայի Պէյրութ [illegible], և Բոր-Սայիտ գացող շոգենաւ [illegible] 2

ՀՌՉԱԿԱՒՈՐ ԿԱՐԳԻՖ ՇՈԳԵՆԱՒՔ
Ըլէն-Լէյ. Միջեւ, Կ. Պոլսոյ և Օտեսայի միջեւ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Պալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Ռանէր	1700
Ապօլլօ	3500	Հիտալկօ	2200	[illegible]	1500
Արկօ	2300	Հօղօ	1000	Բօլօ	1000
Արիօստօ	5000	Կրօտինօ	200	Ռուպիքօ	3800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Ռիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիմալայօ	3000	Ռինալտօ	3200
Պրավօ	2000	Ջիւնօ	7000	Ռօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Ջումպէր	1200	Ռօմէօ	3500
Գէյրօ	2600	Լայկօ	5000	Ռօզարիօ	3500
Գալիբսօ	2500	Ճինօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլլօ	2000	Սանտիակօ	3200
Գաթօ	2000	Քօլպինօ	4200	Սաֆօ	2000
Գօմօ	2700	Քօվնօ	2200	Սիլվիօ	2000
Չիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Դիդօ	3500	Լէանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Դօլըրէսօ	3400	Լիվօռնօ	3000	Թաուրօ	1200
Տիգօ	2300	Ալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրբինօ	900
Տուրօ	4800	Մարդէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրաքօ	2100	Միլօ	2000	Վոլթուռնօ	5000
Էլտօրատօ	2600	Մուրինօ	3100	Եեսօ	3600
Էլսինօրօ	3000	Նիլօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	[illegible]	200
Էրաթօ	2600	Օթէլլօ	5000	Ճէմմօ	200
Ֆալքօն	800	Ոգրանօ	4500	Ջէրօ	140
Ֆիտօ	700	Օտօ	2000	Մօսքիթօ	120

Էմփայըր Մօնարք 8000
Փըրժըն Մօնարք 3000
Էճիփշըն Մօնարք 8100

«Քայրօ» շոգենաւը, նաւապետ Մաքբըմ, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասած, պարպած և Օտեսա ուղեւորած է։

«Իակօ» շոգենաւը, նաւապետ Ուսդըն, ընդհանուր վաճառքով Հըլէն մեկնած է ամսոյս 28ին և դեկտ. 12ին աստ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԻՕ
Գործակալք
Թիւ 17-18. Քիւչիւք Միւմթազ խան, Ղալաթիա
293

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Պոնտոսի միջեւ կանոնաւոր ուղեւորութիւնք

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Արփնէ որ Նոյ. 27ին Մարսիլիայէն և դեկտ. 6ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անատոլի։

Փարիզ Լիոն-Մարսիլիոյ երկաթուղիով ուղեւորութիւնն ի միասին առնլով.
Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »

Բոլոր նաւահանգիստներու համար ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Նիմել առ գործակալութիւն
ԹԻՄՈԹԷ ԲԸԳՈՒԼ
5 Մոմհանէ Սիրքէ Ֆրանսէ

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ